ՀԱՍՏԱՏՎԱԾ է

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի
«20» հունիսի 2022թ.
Թիվ 02-Ո-22-006/01 որոշմամբ
Խորհրդի նախագահ՝
Է. Սուքիասյան_____

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ) ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախագիծը	Անուն/Ազգանուն	Պաշտոն	Ամսաթիվ	Ստորագրություն
ԿԱՋՄԵՑ	Լ. Մամիկոնյան	Գործադիր տնօրենի տեղակալ	27.05.2022	
ՍՏՈՒԳԵՑԻՆ	Գ. Գյուլամբարյան	Համապատասխանության ապահովման պատասխանատու	06.06.2022	
	Հ. Ռաֆայելյան	Իրավաբանական բաժնի պետ	08.06.2022	
ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ	Ա. Մելքոնյան	Գործադիր տնօրեն	10.06.2022	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3
3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ 8
4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ 8
5 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ 10
6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ 12
7 ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ 14
8 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 14
9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ 18
12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21
13 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 24
14 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ 27
ԾՐԱԳԻՐ I. ՍՏԱՆԴԱՐՏ ԾՐԱԳԻՐ 28
ԾՐԱԳԻՐ II. ԿՈՄՖՈՐՏ ԾՐԱԳԻՐ 34
ԾՐԱԳԻՐ III. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ 47
ԾՐԱԳԻՐ IV. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾՐԱԳԻՐ 48

1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ««ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրության պայմանները» նպատակ է հետապնդում տալ Պայմանների կիրառման յուրաքանչյուր ոլորտի ապահովագրական օբյեկտ, ապահովագրական պատահար, ապահովագրական հատուցում և այլ հասկացությունների սահմանումները, ինչպես նաև յուրաքանչյուր ծածկույթի պարագայում կարգավորել Ապահովագրողի կողմից հատուցվող ծախսերի, չհատուցվող ծախսերի, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի և ապահովագրական պատահարի դեպքում՝ Կողմերի գործողությունները:

1.2 Պայմանները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերին (այսուհետ միասին՝ ՀՀ օրենսդրություն) համապատասխան:

1.3 Ընկերությունն իրականացնում է աջակցության ապահովագրություն Օրենքով նախատեսված ոչ կյանքի ապահովագրության 18-րդ դասով, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:

1.4 Սույն փաստաթուղթը համապատասխանում է ISO 9001:2015 և 27001:2013 ՈԿՀ և ՏԱԿՀ ստանդարտներին:

1.5 Պայմանները ուժի մեջ է մտնում 2022թ հուլիսի 04-ից: Պայմանների ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ խորհրդի թիվ 02-Ո-19-001/11 որոշմամբ 23.01.2019թ հաստատված ««Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ ճանապարհորդության (աջակցության) կամավոր ապահովագրության պայմանները»:

1.6 Պայմաններում փոփոխությունները և/կամ լրացումները կատարվում են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու հաստատվում են Ընկերության խորհրդի որոշմամբ:

1.7 Պայմանները հրապարակային օգտագործման փաստաթուղթ է և կարող է տեղադրվել Ընկերության պաշտոնական կայքում (www.silinsurance.am):

2 ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2.1 Ստորև նշված տերմինները և հասկացությունները Պայմաններում կիրառվում են հետևյալ իմաստով.

2.1.1 *Ընկերություն* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ:

2.1.2 *Պայմաններ* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ Աջակցության (ճանապարհորդության) ապահովագրության պայմաններ:

2.1.3 *Ընկերության խորհուրդ կամ Խորհուրդ* – Ընկերության կանոնադրության համապատասխան՝ Ընկերության բաժնետերերի կողմից ձևավորված ընդհանուր կառավարման կոլեգիալ մարմին:

2.1.4 *Ընկերության գործադիր տնօրեն կամ Գործադիր տնօրեն* – Ընկերության կանոնադրությամբ նախատեսված Ընկերության միանձնյա գործադիր մարմին:

2.1.5 *Որակի կառավարման համակարգ* – Որակի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:

2.1.6 *Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ* – Տեղեկատվական հոսքերի բնագավառում Ընկերության կառավարմանը նպատակաուղղված համակարգված միջոցառումների ամբողջություն:

2.1.7 *Որակի պատասխանատու* - Ընկերության աշխատող կամ Ընկերության հետ համապատասխան ծառայության մատուցման պայմանագիր ունեցող այլ ընկերության աշխատող, որը պատասխանատու է Որակի ապահովմանն ու կառավարմանը ներկայացվող պահանջների կատարման համար:

2.1.8 *Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)* - Պայմանների պահանջների հիման վրա կնքված պայմանագիր՝ Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն, որի գործողության ընթացքում Ապահովագրողը պարտավոր է Ապահովադրին կամ Շահառուին կամ վերջինիս համար ապահովագրական գումարի շրջանակներում հատուցել ապահովագրական պատահարի տեղի ունենալու ուժով պատճառված վնասը կամ դրա մի մասը (ապահովագրական հատուցում), բացառությամբ՝ Պայմաններում նախատեսված բացառությունների և չհատուցվող ծախսերի, իսկ Ապահովադիրը պարտավոր է վճարել Պայմանագրում նշված ապահովագրավճարը՝ դրանում նշված կարգով և ժամկետներում:

2.1.9 *Ապահովագրող* - «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ, որն իրականացնում է ապահովագրական գործունեություն՝ համաձայն լիազորված մարմնի կողմից տրված լիցենզիայի:

2.1.10 *Ապահովադիր* - ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձ, գործունակ ֆիզիկական անձ, ոչ ռեզիդենտ կազմակերպություն, որն Ապահովագրողի հետ կնքել է Պայմանագիր:

2.1.11 *Կողմեր* - Ապահովագրողն ու Ապահովադիրը միասին:

2.1.12 *Ապահովագրված անձ* – Պայմանագրում նշված ֆիզիկական անձ, ում հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է

Պայմանագրի առարկա: Որպես Ապահովագրված անձ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունից կամ Արցախի Հանրապետությունից դուրս ճանապարհորդության մեկնող ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց տարիքը Պայմանագրի կնքման պահին չի գերազանցում 70 տարեկանը, եթե Պայմանագրով այլ տարիք նշված չէ: Որպես Ապահովագրված անձ՝ չի կարող հանդես գալ այն պետության քաղաքացին կամ ռեզիդենտը, որի տարածքում կատարվում է ճանապարհորդությունը:

2.1.13 *Շահառու* - ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում Պայմանագրով նախատեսված ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող անձ, որպիսին կարող է հանդիսանալ նաև Ապահովագրված անձը:

2.1.14 *Ապահովագրական ռիսկ* - ապահովագրման ենթակա հնարավոր դեպք կամ իրադարձություն, որը կարող է տեղի ունենալ Պայմանագրի գործողության ժամկետում՝ կրելով հավանական և (կամ) պատահական բնույթ և կախված չէ Կողմերի կամ Ապահովագրված անձի կամ Շահառուի կամքից:

2.1.15 *Ապահովագրական պատահար* - Ապահովագրության տարածքում Պայմանագրով նախատեսված ժամկետում տեղի ունեցած դեպք կամ իրադարձություն՝ նախատեսված Պայմանագրով և Պայմաններով, այդ թվում՝ Ծրագրերով (բացառությամբ սույն Պայմաններում նախատեսված բացառությունների), որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրության տարածքում՝ Պայմանագրի գործողության ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում՝ Պայմաններում և Պայմանագրում նշված կարգով:

2.1.16 *Ապահովագրական գումար* - Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարների դեպքում Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ:

2.1.17 Ապահովագրական հատուցում (այսուհետ՝ Հատուցում) - Պայմանագրի, Պայմանների և համապատասխան Ծրագրի համաձայն՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում վճարման ենթակա գումար (դրամական արտահայտությամբ):

2.1.18 Ապահովագրության տարածք - Պայմանագրում նշված տարածք, որտեղ տեղի ունեցած դեպքը Պայմանների իմաստով կարող է դիտարկվել որպես ապահովագրական պատահար:

2.1.19 *Ապահովագրավճար* - Պայմանագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար:

2.1.20 *Ոչ պայմանական չհատուցվող գումար* - Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ կամ բացարձակ մեծությամբ Պայմանագրով սահմանված գումար, որի չափով Ապահովագրողն ազատվում է հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.1.21 *Աջակցող ընկերություն* – Ընկերության հետ համագործակցության պայմանագիր կնքած կազմակերպություն, որն Ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ Ապահովագրված անձի համար կազմակերպում է ապահովագրության ծրագրերով նախատեսված համապատասխան ծառայությունների մատուցման գործընթացը:

2.1.22 *Ապահովագրության ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)* – Պայմանագրում նշված ծրագիր, որով սահմանվում է Պայմանագրի և Պայմանների հիման վրա հատուցման ենթակա բժշկական և այլ ծառայությունների ցանկը (շրջանակը): Ծրագրերը Հավելվածների տեսքով կցված են Պայմաններին և հանդիսանում են դրա անբաժանելի մաս:

2.1.23 *Դժբախտ պատահար* - Ապահովագրված անձի կամքից անկախ, որևիցե հիվանդության և/կամ դրա բարդության հետ կապ չունեցող կամ հիվանդության հետևանք չհանդիսացող հանկարծակի, անկանխատեսելի, պատահական, անսպասելի, ոչ միտումնավոր, կարճաժամկետ (մինչև 24 ժամ տևողությամբ), արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն կամ դեպք, որի բնույթը, տեղի ունենալու ժամանակը և վայրը միանշանակ են և հստակ, և որի հետևանքով Ապահովագրված անձին պատճառվել է մարմնական վնասվածք և/կամ մահ: Ընդ որում, դժբախտ պատահարը պետք է տեղի ունեցած լինի Պայմանագրի գործողության ընթացքում և հաստատվի համապատասխան իրավասու մարմնի կողմից տրված վերջնական փաստաթղթով:

2.1.24 *Հանկարծակի հիվանդություն* - Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած այնպիսի դեպք կամ իրադարձություն (բացառությամբ քրոնիկ հիվանդությունների սրացումների), որը միաժամանակ պետք է բավարարի ստորև նշված բոլոր պահանջներին, այն է՝

- պահանջում է անհետաձգելի (շտապ) բժշկական օգնություն կամ միջամտություն,
- հիվանդությունը զարգանում է մի քանի ժամվա ընթացքում,
- կրում է սուր, հանկարծակի բնույթ:

2.1.25 *Մարմնական վնասվածք* - Ապահովագրված անձի կենդանի հյուսվածքների կառուցվածքի և օրգանների անատոմիական ամբողջականության խախտում, ինչը հանդիսացել է արտաքին միջավայրի գործոնների միապահ

կամ կարճաժամկետ (մինչև 24 ժամ տևողությամբ) ազդեցության արդյունք, և որը պահանջում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան մասնագիտացում ունեցող բժշկի կամ բժիշկների կողմից:

2.1.26 *Բժշկական ծառայություններ* - միջոցառումներ կամ միջոցառումների համալիր՝ ուղղված հիվանդությունների կամ դժբախտ պատահարների հետևանքով առաջացած վնասվածքների ախտորոշմանը և բուժմանը:

2.1.27 *Բժշկական ծառայություններ մատուցող անձ (այսուհետ՝ Բուժհաստատություն)* - Ապահովագրված անձի այցելած երկրի օրենսդրությանը համապատասխան լիցենզիայի հիման վրա բժշկական ծառայություններ մատուցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

2.1.28 *Դեղատուն* - կազմակերպություն, որն իրականացնում է դեղատնային գործունեություն, այն է՝ Ապահովագրված անձի այցելած երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան դեղերի և սահմանված այլ բժշկական ապրանքատեսակների մեծածախ ձեռքբերում, պահպանում և մանրածախ իրացում կամ բաց թողնում, տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության դեպքում՝ դեղերի պատրաստում կամ առաքում:

2.1.29 *Բժշկական էվակուացիա* - ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված անձի տեղափոխելուն ուղղված միջոցառումների համալիր: Բժշկական էվակուացիան իրականացվում է Ապահովագրված անձի առողջական վիճակին համապատասխան փոխադրամիջոցով, անհրաժեշտության դեպքում նաև բուժանձնակազմի ուղեկցությամբ:

2.1.30 *Ռեպատրիացիա* - Ապահովագրական պատահարի հետևանքով մահացած Ապահովագրված անձի աճյունի տեղափոխում նրա մշտական բնակության վայր, բացառությամբ Պայմաններով նախատեսված դեպքերի: Աճյունի վերադարձման ծառայությունը ներառում է փաստաթղթերի իրավաբանական ձևակերպման ու դիակի հերձման ծառայությունների համար կատարված ծախսերը, ինչպես նաև միջազգային փոխադրման համար անհրաժեշտ դագաղի ձեռքբերման համար կատարված և աճյունի փոխադրման հետ կապված ծախսերը (բացառությամբ հուղարկավորության ծախսերի): Ռեպատրիացիայի ծախսերը չեն հատուցվում, եթե Ապահովագրված անձի մահը ապահովագրական պատահարի հետևանք չէ: Մահվան պատճառի առաջացման փաստն ապացուցելու պարտականությունը կրում է հատուցման դիմում ներկայացնող անձը:

2.1.31 *Ընտանիքի անդամ* - Ապահովագրված անձի հայր, մայր, զավակ, ամուսին (պետական գրանցում ստացած ամուսնության հիման վրա), քույր կամ եղբայր: Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ՝ առանձին դեպքերում

սույն Պայմանների իմաստով Ընտանիքի անդամ կարող է համարվել վերոնշվածներից բացի այլ անձ:

2.1.32 *Երրորդ անձ* – Ապահովագրված անձի և/կամ Ապահովադրի Ընտանիքի անդամ չհանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ, ինչպես նաև Ապահովագրված անձի և/կամ Ապահովադրի Ընտանիքի անդամի հետ չփոխկապակցված իրավաբանական անձ:

2.1.33 *Ռեզիդենտ* – համապատասխան պետությունում մշտապես կամ առավելապես բնակվող և/կամ կենսական շահերի կենտրոն ունեցող անձ:

2.1.34 *Տրանսպորտային տոմս (այսուհետ՝ Տոմս)* - ինքնաթիռով կամ որևէ ցամաքային տրանսպորտային միջոցով էկոնոմ կարգի կամ դրան հավասարեցված տոմս (մեկ ուղղությամբ):

2.1.35 *Մշտական բնակության վայր* – այն պետությունը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է:

2.2 Հապավումներ.

2.2.1 ՀՀ – Հայաստանի Հանրապետություն:
2.2.2 ԱՀ – Արցախի Հանրապետություն:
2.2.3 ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն:
2.2.4 ԱՀԿ – Առողջապահության համաշխարհային կազմակերպություն:
2.2.5 ՈԿՀ – ISO 9001 ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ:
2.2.6 ՏԱԿՀ – ISO 27001 ստանդարտին համապատասխան Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ:

3 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1 Ապահովագրության օբյեկտն ապահովագրված անձի օրինական գույքային շահերն են՝ կապված Ապահովագրության տարածքում ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ:

4 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

4.1 Ապահովագրական գումարը սահմանվում է Պայմանագրում՝ ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

4.2 Պայմանագրի գործողության ժամանակ տեղի ունեցած մեկ կամ մի քանի ապահովագրական պատահարների գծով հատուցումների ընդհանուր գումարը

չի կարող գերազանցել Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարը:

4.3 Պայմանագրով կարող են նախատեսվել ապահովագրական հատուցման առավելագույն ենթասահմանաչափեր:

4.4 Ապահովագրական գումարն ինքնաշխատ կերպով նվազում է կատարված ապահովագրական հատուցման գումարի չափով:

4.5 Ապահովագրողին կամ Աջակցող ընկերությանը տեղեկացնելու, սակայն առանց վերջիններիս կարգադրության/ցուցումի հետևելու Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ինքնուրույն (իր համար) ծախսեր կատարելու դեպքում վերջին(ներ)իս Պայմանների շրջանակներում ապահովագրական հատուցում կարող է տրամադրվել առավելագույնը 150 (մեկ հարյուր հիսուն) եվրոյի սահմաններում:

4.6 Պայմաններով նախատեսված ատամնաբուժության գծով ապահովագրական գումարի ենթասահմանաչափը կազմում է առավելագույնը 200 (երկու հարյուր) եվրո:

4.7 Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ԱՄՆ-ում կամ Կանադայում, որոնք հանդիսանում են ապահովագրության տարածք, ապա՝

4.7.1 այդ պետությունների բժշկական հաստատություններում ամբուլատոր (արտահիվանդանոցային) պայմաններում ախտորոշման և բուժման հետ կապված ծախսերը հատուցվում են առավելագույնը 1000 (մեկ հազար) ԱՄՆ դոլարի սահմաններում, եթե այդ հետազոտությունների արդյունքում հաստատվում է ապահովագրական պատահարի առկայության փաստը:

4.7.2 այդ պետությունների բժշկական հաստատություններում հիվանդանոցային պայմաններում անցկացրած յուրաքանչյուր օրվա համար հատուցվում է ոչ ավել, քան 500 (հինգ հարյուր) ԱՄՆ դոլարի չափով, բայց ոչ ավել, քան 3000 (երեք հազար) ԱՄՆ դոլարի չափով յուրաքանչյուր դեպքի համար:

4.8 Ապահովագրողը հատուցում է Ապահովադրի/Ապահովագրված անձի կամ նրա Ընտանիքի անդամի կամ նրա շահերը ներկայացնող անձի կողմից Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին կատարված զանգերի հետ կապված ծախսերը՝ զանգերը և զանգի համար վճարված գումարը հավաստող համապատասխան փաստաթղթերը վերջին(ներ)իս կողմից Պայմաններով նախատեսված ժամկետներում ներկայացնելու դեպքում, սակայն ոչ ավել, քան 50 (հիսուն) եվրոյի սահմաններում յուրաքանչյուր պատահարի գծով:

4.9 Ապահովագրական պատահարի հետևանքով մահացած Ապահովագրված անձի աճյունի ռեպատրիացիայի ծախսերը հատուցվում են Ապահովագրական գումարի մինչև 15%-ի չափով, եթե Պայմանագրով կամ առանձին Ծրագրերով այլ ենթասահմանաչափ սահմանված չէ:

4.10 Պայմանագրով կարող է նախատեսվել ոչ պայմանական չհատուցվող գումար՝ դրամական արտահայտությամբ կամ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ:

4.11 Եգիպտոսի Արաբական Հանրապետության տարածքում կիրառվում է ոչ պայմանական չհատուցվող գումար 50 (հիսուն) եվրոյի չափով յուրաքանչյուր և ամեն պատահարի/հայցի դեպքում՝ տոնզիլիտների, օտիտների, ալիմենտար ՍԱՏ-ի խանգարումների, վերին շնչուղիների հիվանդությունների, մրսածության և դրանցից բխող բարդությունների հետ կապված բժշկական ծախսերի նկատմամբ:

4.12 Ապահովագրողը հատուցում է նաև ապահովագրական պատահարի հանգամանքների նախնական բացահայտման, դրա հետևանքով ապահովագրության օբյեկտին պատճառված վնասի նվազեցման կամ կանխարգելման և տուժած անձանց կյանքը փրկելու, Ապահովագրված անձի մեղավորության աստիճանի պարզման նպատակով իրականացված անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

4.13 Ապահովագրավճարի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ համաձայն վերջինիս կողմից սահմանված սակագների:

4.14 Ապահովագրավճարը կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես արտարժույթով՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

4.15 Արտարժույթով սահմանված ապահովագրավճարը Ընկերությանը ՀՀ դրամով վճարվելու դեպքում հիմք է ընդունվում վճարման օրվա դրությամբ տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը:

4.16 Ապահովագրավճարը պետք է վճարվի միանվագ՝ Պայմանագրի կնքման պահին, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագով:

4.17 Ապահովագրավճարը վճարվում է կանխիկ կամ Ապահովագրողի բանկային հաշվին փոխանցումով՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

5 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1 Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովագրողի կողմից տրամադրված և Ապահովադրի կողմից լրացված դիմում-հարցաթերթիկը կամ նրա բանավոր հայտը՝ հետևյալ տվյալներով.

5.1.1 ֆիզիկական անձի դեպքում՝ Ապահովադրի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման և մշտական բնակության վայրի հասցեները

(դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը, անձնագրային կամ նույնականացման քարտի տվյալները:

5.1.2 Իրավաբանական անձի դեպքում՝ Ապահովադրի անվանումը, պետական ռեգիստրի գրանցման համարը, ՀՎՀՀ-ն, իրավաբանական և փաստացի գործունեության հասցեները (դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը և բանկային հաշվեհամարը:

5.1.3 Ապահովագրված անձի անունը, ազգանունը, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով, ծննդյան օրը, ամիսը, տարին, հաշվառման և մշտական բնակության վայրի հասցեները (դրանց տարբերության դեպքում), հեռախոսահամարը, անձնագրային տվյալները:

5.1.4 Ճանապարհորդության մեջ գտնվելու պլանավորված ժամանակահատվածի սկիզբն ու ավարտը:

5.1.5 Այն պետությունների ցանկը, որոնց տարածքում Ապահովագրված անձը գտնվելու է ճանապարհորդության ընթացքում՝ հաշվի առնելով Պայմանների 5.12 կետում նշված բացառությունները:

5.1.6 Ճանապարհորդության նպատակը:

5.1.7 Պահանջվող Ապահովագրության ծրագիրը(երը):

5.2 Պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, երեք օրինակից, անհրաժեշտության դեպքում կարող է կնքվել ավել օրինակներից, որոնք ստորագրում են Կողմերը:

5.3 Պայմանագիրը կարող է կնքվել նաև Ապահովագրողի կողմից ստեղծված առցանց էլեկտրոնային հավելվածի միջոցով, որն ունի նույն իրավաբանական ուժը, ինչ Կողմերի կողմից ձեռագիր ստորագրված Պայմանագիրը:

5.4 Պայմանագրի կնքման համար պարտադիր պայման է, որ Ապահովագրված անձը դրա կնքման պահին գտնվի Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության տարածքում:

5.5 Պայմանագրի անբաժանելի մասն են կազմում Պայմանները: Պայմանագրին կից կարող են թողարկվել հավելվածներ, որոնք նույնպես հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

5.6 Պայմանագրի կորստի, վնասվածքի կամ ոչնչացման դեպքում Ապահովագրողը Ապահովադրի կամ Ապահովագրված անձի դիմումի հիման վրա 3 աշխատանքային օրվա ընթացքում վերջին(ներ)իս տրամադրում է Պայմանագրի կրկնօրինակը:

5.7 Պայմանագիրը կնքվում է Ապահովագրված անձի ճանապարհորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի համար, սակայն ոչ պակաս, քան 3 (երեք) օր ժամկետով և ոչ ավել, քան 1 (մեկ) տարի ժամկետով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

5.8 Եթե Պայմանագրով նախատեսված են Ապահովագրված անձի բազմակի ուղևորություններ, ապա Ապահովագրողի մոտ ապահովագական հատուցում

վճարելու պարտավորություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի ընթացքում: Այս դեպքում Ապահովագրված անձի կատարած յուրաքանչյուր ճանապարհորդության ժամանակ Պայմանագրով սահմանված ապահովագրված օրերի քանակն ինքնաշխատ կերպով պակասեցվում է Ապահովագրության տարածքում գտնվելու օրերի քանակով:

5.9 Ապահովագրողը կարող է ապահովագրել նաև 70 տարեկանից բարձր անձանց՝ Ապահովագրողի կողմից սահմանված հատուկ նշումով/պայմաններով (այդ թվում՝ ապահովագրավճարի վերահաշվարկմամբ):

5.10 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ վճարելու պահից, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.11 Պայմանագրի գործողության ժամկետը սկսվում է Ապահովագրված անձի կողմից Ապահովագրության տարածքի սահմանը հատելու պահից (եթե Պայմաններով այլ բան նախատեսված չէ), սակայն Պայմանագրում նշված գործողության ժամկետից ոչ շուտ, և գործում է մինչև Պայմանագրում նշված գործողության ժամկետի ավարտը:

5.12 Պայմանագիրը չի գործում այն պետությունների տարածքում, որտեղ Ապահովագրված անձն ունի գրանցում (հաշվառում) կամ հանդիսանում է տվյալ երկրի քաղաքացի կամ ռեզիդենտ, ինչպես նաև այն պետությունների տարածքում, որտեղ.

5.12.1 տեղի են ունենում ռազմական/պատերազմական գործողություններ կամ անցկացվում են ահաբեկչական-հակաահաբեկչական միջոցառումներ:

5.12.2 Կիրառվում են ՄԱԿ-ի կամ որևէ պետության կողմից սահմանված տնտեսական և/կամ ռազմական պատժամիջոցներ:

5.12.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո հայտնաբերվել և արձանագրվել/ճանաչվել են համաճարակների օջախներ:

6 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

6.1 Պայմանագիրը դադարում է.

6.1.1 Եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը:

6.1.2 Եթե Ապահովագրողը կատարել է Ապահովադրի կամ Ապահովագրված անձի կամ Շահառուի հանդեպ իր պարտականությունները ամբողջ ծավալով:

6.1.3 Եթե ավարտվել է Պայմանագրի գործողության ժամկետը կամ սպառվել է ապահովագրված օրերի քանակը կամ ապահովագրական գումարը:

6.1.4 Եթե լուծարվել է իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադիրը, բացառությամբ այն դեպքերի, երբ Շահառուն այլ անձ է:

6.1.5 Եթե առկա է Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնությունը:

6.1.6 Ապահովադրի կամ Ապահովագրողի նախաձեռնությամբ, եթե մյուս Կողմը չի կատարել կամ պատշաճ ձևով չի կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

6.1.7 Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6.2 Մինչև Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը Ապահովադրի գրավոր դիմումի հիման վրա Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում վերջինիս վերադարձվում է վճարված ապահովագրավճարը՝ 75%-ի չափով, եթե պահպանվել են հետևյալ պահանջները.

6.2.1 նախատեսված ճանապարհորդության չկայացման մասին Պայմանագրի գործողությունը սկսվելուց առնվազն 1 (մեկ) աշխատանքային օր առաջ Ապահովադիրը տեղեկացրել է Ապահովագրողին:

6.2.2 Ապահովագրողի պահանջով՝ վերջինիս հետ է վերադարձվել Պայմանագրի բնօրինակը:

6.2.3 Ապահովագրողին ներկայացվել է արտերկիր չմեկնելու գրավոր հիմքերը:

6.3 Պայմանների 6.2 կետի պահանջների չկատարման դեպքում նույն կետում նշված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ: Ընկերությունն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանների 6.2 կետի հաշվարկում 75%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 75-ից ավելի բարձր տոկոսներ:

6.4 Պայմանագրի գործողության ժամկետը սկսվելուց հետո Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ:

6.5 Պայմանագիրը Ապահովադրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովագրողի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու/խախտելու հանգամանքով, ապա խախտման փաստն Ապահովադրի կողմից ապացուցվելու դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ստացված ապահովագրա-վճարների և վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը:

6.6 Պայմանագիրը Ապահովագրողի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծվելու դեպքում, եթե այն պայմանավորված է Ապահովադրի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու/խախտելու հանգամանքով, ապահովագրավճարը չի վերադարձվում:

7 ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Պայմաններն իր մեջ ներառում է ստորև թվարկված ռիսկերը՝ ըստ հետևյալի.

7.1 Ծրագիր I. Ստանդարտ (հիմնական ռիսկեր) (Հավելված 1):

Սույն ծրագիրն իր մեջ ներառում է դժբախտ պատահարի, հանկարծակի հիվանդության կամ մահվան տեղի ունենալու ուժով հետևյալ ծախսերի հատուցումը՝

7.1.1 Բժշկական ծախսերի հատուցում:

7.1.2 Բժշկական էվակուացիայի ծախսերի հատուցում:

7.1.3 Ռեպատրիացիայի ծախսերի հատուցում:

7.2 Ծրագիր II. Կոմֆորտ (լրացուցիչ ռիսկեր) (Հավելված 2):

Սույն ծրագիրն իր մեջ ներառում է Ստանդարտ Ծրագրում թվարկված ռիսկերը և հետևյալ լրացուցիչ ռիսկերը.

7.2.1 Տրանսպորտային ծախսերի հատուցում:

7.2.2 Ճանապարհորդության մեջ գտնվող անձի ուղեբեռի կորուստ:

7.2.3 Ապահովագրված անձի քաղաքացիական պատասխանատվություն:

7.2.4 Ճանապարհորդության մեջ գտնվող անձի թռիչքի ուշացում:

7.2.5 Ճանապարհորդության վաղաժամկետ ընդհատում:

7.2.6 Ճանապարհորդության մեջ գտնվող անձի փաստաթղթերի կորուստ:

7.2.7 Իրավաբանական ծառայությունների ծախսերի հատուցում:

7.3 Ծրագիր III. Հատուկ ծրագիր (Հավելված 3):

Սույն Ծրագիրն իր մեջ ներառում է Ստանդարտ Ծրագրում թվարկված ռիսկերը ամբողջ աշխարհի համար (բացառությամբ Պայմանների 5.12. կետում նշված պետությունների), 30,000 (երեսուն հազար) եվրո ապահովագրական գումարի չափով:

7.4 Ծրագիր IV. Լրացուցիչ ծրագիր. «Կորոնավիրուսային հիվանդություն՝ Covid 19» (այսուհետ՝ Covid - 19-ից ապահովագրություն) (Հավելված 4):

Սույն Ծրագիրն իր մեջ ներառում է Covid – 19 ախտորոշման դեպքում հետևյալ ծախսերի հատուցումը՝

7.4.1 Բժշկական ծախսերի հատուցում:

7.4.2 Ռեպատրիացիայի ծախսերի հատուցում:

8 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1 Ապահովադիրն իրավունք ունի՝

8.1.1 Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական միջնորդի միջոցով:

8.1.2 Ապահովագրողից պահանջել ապահովագրական գործունեությունը հավաստող փաստաթղթեր (գործունեության լիցենզիա և այլն):

8.1.3 Պայմանագրով և Պայմաններով սահմանված կարգով ստանալ ապահովագրական հատուցում:

8.1.4 Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Պայմաններով սահմանված կարգով:

8.1.5 Պայմանագրի կորստի, ոչնչացման դեպքում ստանալ վերջինիս կրկնօրինակը կամ Ապահովագրողի կողմից հաստատված պատճենը՝ «Բնօրինակի հետ նույնն է» մակագրությամբ:

8.1.6 Իր և Ապահովագրողի միջև ծագած տարաձայնությունների/վեճերի դեպքում դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

8.2 Ապահովադիրը պարտավոր է՝

8.2.1 Վճարել ապահովագրավճարը Պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:

8.2.2 Պայմանագրի կնքման պահին և գործողության ընթացքում Ապահովագրողին հայտնել ապահովագրական ռիսկի գնահատման համար էական նշանակություն ունեցող և ապահովագրության օբյեկտի ռիսկայնությունը մեծացնող՝ իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը:

8.2.3 Ապահովագրողին հայտնել այլ պայմանագրերով իր և/կամ Ապահովագրված անձի ապահովագրված լինելու մասին:

8.2.4 Ապահովագրված անձին ծանոթացնել Պայմանագրի և Պայմանների դրույթների հետ: Նշված պարտավորությունը չկատարելու դեպքում դրա բացասական հետևանքները, այդ թվում՝ ֆինանսական, կրում է Ապահովադիրը:

8.2.5 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրում նշված կոնտակտային հեռախոսահամարով կամ տեղեկացման փաստը հավաստող այլ եղանակով պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին և/կամ Աջակցող ընկերությանը: Ընդ որում, տվյալ դեպքերում ապահովագրական պատահարի մասին տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը կրում են Ապահովադիրը և Ապահովագրված անձը:

8.2.6 Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են պատահարի պատճառների և/կամ վնասի չափի հիմնավորման համար:

8.2.7 Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և Պայմաններով ստանձնած իր պարտականությունները:

8.3 Ապահովագրված անձը պարտավոր է՝

8.3.1 ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ապահովագրական պատահարի առաջացումը կանխելու կամ առաջանալու դեպքում հետևանքները մեղմացնելու/նվազեցնելու համար:

8.3.2 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրում նշված կոնտակտային հեռախոսահամարով կամ տեղեկացման փաստը հավաստող այլ եղանակով պատահարի մասին տեղեկացնել Ապահովագրողին և/կամ Աջակցող ընկերությանը:

8.3.3 հետևել բուժհաստատության և բժշկի կողմից տրված ցուցումներին և Ապահովագրողի և/կամ Աջակցող ընկերության կարգադրություններին/ցուցումներին:

8.3.4 Պայմանագրում Հավելված 3-ով նախատեսված Ապահովագրական ծրագիրը ներառվելու դեպքում Ապահովագրողին առնվազն 3 օր առաջ տեղեկացնել հերթական ճանապարհորդության մասին՝ զանգահարելով Ապահովագրողի շուրջօրյա հեռախոսահամարով:

8.3.5 Ապահովագրական պատահարի դեպքում ապահովել (համաձայնություն տալ) Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից նշանակված փորձագետի՝ իր հիվանդության պատմությունից օգտվելու հնարավորությունը:

8.3.6 Պատշաճ կերպով կատարել Պայմանագրով և Պայմաններով ստանձնած իր պարտականությունները:

8.4 Ապահովագրողն իրավունք ունի՝

8.4.1 ստուգել Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձի կողմից տրամադրված տեղեկությունների և տվյալների արժանահավատությունը իրեն հասանելի ցանկացած միջոցներով, որոնք չեն հակասում ՀՀ օրենսդրությանը:

8.4.2 Ապահովադրի կողմից Պայմանագրի պայմանների չկատարման կամ խախտման դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առնվազն երկու աշխատանքային օր առաջ դրա մասին ծանուցելով Ապահովադրին:

8.4.3 Պայմանագրին կից հավելվածներ կնքելիս, անհրաժեշտության դեպքում, Ապահովադրից պահանջել լրացուցիչ ապահովագրավճար՝ հավելվածում հաշվարկված գումարի չափով:

8.4.4 Ապահովագրական ռիսկի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկանալուց հետո Ապահովադրից պահանջել վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար: Նշված պահանջն Ապահովադրի կողմից չվճարվելու դեպքում կիրառվում է Պայմանների 8.4.8 կետով նախատեսված իրավական հետևանքը:

8.4.5 Ապահովագրական պատահարի հանգամանքները հետաքննելու և պարզելու համար լրացուցիչ տեղեկություններ պահանջել Ապահովագրված անձից կամ ինքնուրույն հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմին-

ներին, բժշկական հաստատություններին և այլ կազմակերպություններին, որոնք տիրապետում են ապահովագրական պատահարի մասին տեղեկատվությանը, ինչպես նաև ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառներն ու հանգամանքները:

8.4.6 վերջնական որոշում կայացնելու համար հատուցման դիմում ներկայացնող անձից պահանջել անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթեր, ինչպես նաև անձամբ հետաքննել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ ներգրավել այլ անձանց:

8.4.7 կասեցնել ապահովագրական հատուցման գործընթացը, այդ թվում՝ ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները, նշված որոշման համար անհրաժեշտ հավելյալ տեղեկություններ ստանալու, ՀՀ օրենսդրությամբ ու Պայմաններով սահմանված դեպքերում այլ գործողություններ իրականացնելու նպատակով:

8.4.8 Ապահովադրի կողմից ապահովագրավճարը Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ առանց Ապահովադրին նախապես ծանուցելու:

8.4.9 Պայմաններով սահմանված ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված փաստացի վնասի չափը պարզելու համար նշանակել կամ պատվիրակել փորձաքննություն և կրել վերջիններիս կողմից մատուցված ծառայությունների ծախսերը:

8.4.10 Ապահովադրից պահանջել տրամադրել գրավոր տեղեկություն, որն ուղղակի կամ անուղղակի կարող է որոշակի ազդեցություն ունենալ Ապահովագրողի կողմից ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով հնարավոր վնասի չափի կանխորոշման վրա, ինչպես նաև այլ փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման և Պայմանագրի կնքման համար:

8.4.11 իրականացնել Պայմաններով նախատեսված այլ գործողություններ:

8.5 Ապահովագրողը պարտավոր է՝

8.5.1 Նախապես տրամադրել Պայմանները Ապահովադրին՝ ծանոթանալու համար:

8.5.2 Պայմանագիրը կնքելիս Պայմանագրի և Պայմանների մեկական օրինակ տրամադրել Ապահովադրին և այդ մասին նշում կատարել Պայմանագրում:

8.5.3 Երրորդ անձանց չտրամադրել տեղեկություններ Ապահովադրի և Ապահովագրված անձանց մասին, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.5.4 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Պայմաններով և Պայմանագրով սահմանված կարգով կատարել ապահովագրական հատուցման վճարում:

9 ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

9.1 Եթե առանձին Ծրագրով այլ պահանջներ նախատեսված չեն, ապա Ապահովագրական պատահար տեղի ունենալուց ոչ ուշ, քան 5 ժամվա ընթացքում, իսկ նախատեսված տեղեկացման անհնարինության դեպքում՝ անհնարինությունն առաջացնող հանգամանքների վերանալուց անմիջապես հետո Ապահովագրված անձը (նրա ներկայացուցիչը) և/կամ Ապահովադիրը պարտավոր են հայտնել պատահարի մասին Աջակցող ընկերությանը և/կամ Ապահովագրողին՝ բժշկական օգնության, բժշկա-տրանսպորտային կամ այլ ծառայություններից օգտվելու և դրանց հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով:

9.2 Դիմելով Աջակցող ընկերությանը և/կամ Ապահովագրողին՝ Ապահովադիրը/Ապահովագրված անձը (նրանց ներկայացուցիչը) պարտավոր է հայտնել հետևյալ տեղեկությունները՝

9.2.1 Ապահովագրված անձի անունը, ազգանունը:

9.2.2 Պայմանագրի համարը:

9.2.3 Պատահարի նկարագիրը (վայրը, օրը, ժամը, հանգամանքները):

9.2.4 Ապահովագրված անձի գտնվելու վայրը և հետադարձ կապի տվյալները:

9.3 Բացի վերը նշվածից՝ Ապահովագրված անձը պարտավոր է՝

9.3.1 բժշկական օգնություն և/կամ այլ ծառայություն ստանալու նպատակով հետևել Աջակցող ընկերության և/կամ Ապահովագրողի ցուցումներին, կարգադրություններին:

9.3.2 Բժշկական օգնություն և/կամ այլ ծառայություն ցուցաբերողին ներկայացնել Պայմանագիրը:

9.3.3 Իր ցանկացած գործողություն համաձայնեցնել Աջակցող ընկերության և/կամ Ապահովագրողի հետ:

9.3.4 Բժշկական օգնություն ստանալու դեպքում հետևել բուժող բժշկի նշանակումներին ու խորհուրդներին:

9.4 Ստանալով ապահովագրական պատահարի մասին տեղեկությունը՝ Աջակցող ընկերությունը (Ապահովագրողի համաձայնությամբ) կամ Ապահովագրողը կազմակերպում են Ապահովագրված անձին անհրաժեշտ՝ Պայմանագրով

նախատեսված համապատասխան բժշկական և այլ ծառայությունների մատուցումը:

9.5 Եթե Ապահովագրված անձին չի հաջողվել կապ հաստատել Աջակցող ընկերության հետ, որում բացակայում է Ապահովագրված անձի մեղքը, ապա Ապահովագրված անձն իրավունք ունի ստանալ բժշկական կամ այլ ծառայությունները՝ նախապես պարտադիր տեղեկացնելով Ապահովագրողին, և ինքնուրույն վճարել մատուցված ծառայությունների համար: Վերը նշված գործողությունները՝ Ապահովագրված անձի կողմից օբյեկտիվ պատճառներով կատարելու անհնարինության դեպքում դրանք կարող են կատարվել Ապահովագրված անձի շահերը ներկայացնող անձի կողմից:

9.6 Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը և նրա շահերը ներկայացնող անձը պարտավոր են գործել Ապահովագրողի և/կամ պատահարի գծով ծառայություն մատուցող ցանկացած անձի հրահանգների/կարգադրությունների և/կամ ցուցումների համաձայն:

10 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

10.1 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն (ռեպատրիացիայի դեպքում՝ նրա իրավահաջորդը) իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հատուցման դիմում և տվյալ Ծրագրով պահանջվող փաստաթղթերը:

10.2 Ապահովագրողը Ապահովադրի, Ապահովագրված անձի, նրանց իրավահաջորդների կողմից հատուցման դիմումին կից, Պայմաններով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է ապահովագրական հայցը բավարարելու կամ մերժելու մասին որոշում (բացառությամբ Պայմանների 8.4.7 կետի)՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելով սույն կետում նշված դիմումը ներկայացրած անձին:

10.3 Ապահովագրական հայցը բավարարելու մասին որոշման կայացման դեպքում Ապահովագրողը 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ապահովագրական հատուցման վճարում:

10.4 Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարաձգելու մասին, Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ

ժամկետը երկարաձգել ևս 6 (վեց) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը:

10.5 Պայմաններով սահմանված ժամկետում Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ Պայմաններով սահմանված ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում՝ Ապահովագրողը, Պայմաններով սահմանված ժամկետը լրանալուց հետո, կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

10.6 Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:

10.7 Բոլոր ներկայացվող փաստաթղթերը պետք է լինեն կնիքով կամ դրոշմակնիքով կամ ֆիրմային ձևաթղթի վրա (հակառակ դեպքում բժշկական ծախսերի ժամանակ պետք է ներկայացվեն բուժող բժշկի անունը, ազգանունը և հեռախոսահամարը և/կամ էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև այն բժշկական հաստատության հասցեն և հեռախոսահամարը և/կամ էլեկտրոնային փոստի հասցեն, որտեղ Ապահովագրված անձը ստացել է Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասվածքի և/կամ հիվանդության համար բուժումը):

10.8 Հետաքննություն, զննումներ և փորձաքննություններ պահանջող, ինչպես նաև բժշկական հաստատություններից, դատական և/կամ այլ իրավասու մարմիններից լրացուցիչ տեղեկությունների ստացում պահանջող հանգամանքների առկայության դեպքում ապահովագրական հատուցման որոշման կայացման ժամկետները կասեցվում են մինչև հետաքննության ավարտը և/կամ նշված տեղեկությունների ստացումը, ինչի մասին Ապահովագրողը դիմողին ուղարկում է համապատասխան ծանուցում:

10.9 Եթե պատահարի գծով առկա է քաղաքացիական, քրեական, դատական կարգով վարչական գործ կամ նույն պատահարի գծով Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվող գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա հատուցման որոշման կայացման և/կամ հատուցման վճարման ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը կամ մինչև Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից որոշում կայացնելու և այն կողմերի համար պարտադիր դառնալու օրը:

10.10 Ապահովադիրը պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած այլ գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է ներկայացնի անմիջապես Ապահովագրողին:

11 ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

11.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) պատճառված վնասից բխող նրա (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջի իրավունքը վնասը պատճառած անձի (անձանց) նկատմամբ անցնում է Ապահովագրողին՝ նրա կողմից հատուցված գումարի մասով:

11.2 Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է Ապահովագրողին հանձնել իր պահանջի իրավունքը հավաստող փաստաթղթերն ու այլ ապացույցներ՝ հայտնելով Ապահովագրողին պահանջի փոխանցման (սուբրոգացիայի) իրավունքը կիրառելու համար բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Եթե Ապահովադիրը գրավոր ձևով հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ պահանջի իրավունքի փոխանցման կիրառումից կամ այդ իրավունքը կիրառելն անհնարին է դարձել Ապահովադրի մեղքով, ապա Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից կամ իրավունք ունի պահանջելու վերադարձնել արդեն իսկ վճարված հատուցված գումարը:

11.3 Ապահովագրողն իրեն անցած պահանջի իրավունքն իրականացնում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) և վնասների համար պատասխանատու անձի (անձանց) միջև հարաբերությունները կարգավորող կանոնների պահպանմամբ:

12 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12.1 Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Պայմանագրով և Պայմաններով նախատեսված ցանկացած տեսակի ծառայությունների համար կատարված ծախսերը ենթակա չեն հատուցման հետևյալ դեպքերում.

12.1.1 Ապահովագրված անձը կամ Ապահովադիրը պատահարի, իր նախաձեռնած գործողությունների և/կամ իր կողմից անձամբ կրած ծախսերի մասին Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով չի տեղեկացրել Աջակցող ընկերությանը և/կամ Ապահովագրողին:

12.1.2 Բժշկական էվակուացիան կամ ռեպատրիացիան կազմակերպված չի եղել Աջակցող ընկերության կողմից կամ կատարվել է առանց Աջակցող ընկերության կամ Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցման:

12.1.3 Ապահովագրված անձը բժշկական հաստատություն է այցելել պլանային բուժում և/կամ բուժօգնություն ստանալու նպատակով:

12.1.4 Ապահովագրված անձը պատահարի ժամանակ եղել է ալկոհոլի, թմրանյութերի, տոքսիկ նյութերի և ցանկացած այլ տեսակի հոգեմետ միջոցների ազդեցության ներքո:

12.1.5 Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից հակա-օրինական գործողություններ կատարելու ժամանակ կամ հետևանքով:

12.1.6 Ապահովագրված անձը չի պահպանել վարակիչ հիվանդությունների պրոֆիլակտիկայի միջազգային պահանջները:

12.1.7 Ապահովագրական պատահարը տեղի է ունեցել տարերային աղետների և/կամ դրանց հետևանքների, համաճարակների պատճառով, բացառությամբ Հավելված 4 -ով նախատեսված դեպքերի:

12.1.8 Ապահովագրված անձի բժշկական էվակուացիան իրականացվել է այնպիսի իրավիճակում, երբ նրա հիվանդությունները կամ վնասվածքները կարող էին բուժվել տեղում և չէին խոչընդոտի Ապահովագրված անձի ճանապարհորդությունը շարունակելուն:

12.1.9 Պատահարը հանդիսանում է բնածին հիվանդությունների և/կամ վիճակների, ներառյալ՝ ներարգանդային զարգացման ընթացքում ձևավորվող արատների և/կամ անոմալիաների, անատոմիական առանձնահատկությունների, դեֆորմացիաների, ժառանգական և գենետիկ հիվանդությունների դրսևորում և/կամ հետևանք:

12.2 Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց, եթե ապահովագրական պատահարն առաջացել է՝

12.2.1 Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ներգործության, ժողովրդական հուզումների, զանգվածային անկարգությունների, խռովությունների, հեղափոխությունների, գործադուլների, ապստամբությունների, քաղաքացիական պատերազմի, պատերազմի և այլ ռազմական գործողությունների, զորաշարժերի, զորավարժությունների կամ այլ ռազմական միջոցառումների, ահաբեկչական ակտերի, բնական աղետների, ցանկացած տեսակի արտակարգ իրավիճակների (աղետներ և այլն) և անհաղթահարելի ուժի հետևանքով:

12.2.2 Ապահովագրված անձի կողմից վիրտուալ հարթակների կիրառման հետևանքով:

12.2.3 Ապահովագրված անձի՝ վտանգավոր և/կամ էքստրեմալ սպորտաձևերով զբաղվելու, այդ թվում՝ լեռնային տուրիզմ (ալպինիզմ), վինդսերֆինգ, դայվինգ, պարաշյուտիզմ, սավառնարվեստ, սքեյթբորդինգ, սնոուբորդինգ, սահելը լեռնային դահուկներով, լեռնային հեծանիվ (մաունթինբայկ), հոլովակասպորտ, ժայռամագլցում, սպելեոլոգիա, սպորտային տուրիզմ,

ձմեռային լող, բեյսջամփինգ և այլ սպորտաձևերով, ձիարշավներում, մրցարշավներում, ցանկացած սպորտային մրցումներում մասնակցության, մասնագիտական պարապմունքներ իրականացնելու, պրոֆեսիոնալ կամ սիրողական սպորտով զբաղվելու, մարզումներին ու սպորտային միջոցառումներին մասնակցելու, ժամանցային նպատակով սպորտով զբաղվելու և ցուցադրումների մասնակցելու հետևանքով:

Ապահովագրողը հատուցում է սույն կետով նշված դեպքերի արդյունքում առաջացած վնասները, եթե Պայմանագիրը կնքելու պահին Ապահովադիրը գրավոր տեղեկացրել է, որ Ապահովագրված անձը ճանապարհորդության ընթացքում զբաղվելու է նախատեսված միջոցառումներով, և ապահովագրա-վճարը հաշվարկելիս օգտագործվել են սակագինը բարձրացնող համապատասխան գործակիցներ:

12.3 Եթե Պայմանագրով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ, ապա Ապահովագրական պատահար չեն հանդիսանում նաև ներքոնշյալ գործողությունների հետևանքով առաջացած իրադարձությունները՝

12.3.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի)՝ սեփական կյանքը և առողջությունը վերջինիս սովորական կենսագործունեության համեմատ չհիմնավորված/բարձր ռիսկի ենթարկելու գծով միտումնավոր փորձը, բացառությամբ՝ այլ մարդու կյանքը փրկելու դեպքերի:

12.3.2 Ապահովագրված անձի կողմից վարորդական իրավունքի բացակայության պայմաններում տրանսպորտային միջոց վարելու արդյունքում տեղի ունեցած պատահարը:

12.3.3 տրանսպորտային միջոցը այլ անձի կողմից կառավարվելու ընթացքում առաջացած ճանապարհատրանսպորտային պատահարը այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) նախօրոք տեղեկացված է եղել, որ վարորդը չի ունեցել վարելու իրավունք կամ զրկված է եղել այդ իրավունքից և/կամ գտնվել է ոչ սթափ վիճակում:

12.3.4 Ապահովագրված անձի կողմից որպես օդաչու իրականացված թռիչքը ցանկացած տեսակի թռչող սարքով:

12.3.5 Ապահովագրված անձի կողմից շրջապատի համար առավել վտանգի աղբյուրի հետ կապված գործունեության իրականացումը (տրանսպորտային միջոցների, մեխանիզմների, բարձր լարվածության էներգիայի, ատոմային էներգիայի, պայթուցիկ նյութերի, ուժեղ ներգործող թույների և այլնի օգտագործում, շինարարական և դրա հետ կապված այլ գործունեության իրականացում), այդ թվում՝ որպես մասնագիտական գործունեություն:

12.3.6 Ապահովագրված անձի ծառայությունը ցանկացած երկրի զինված և/կամ խաղաղապահ ուժերում և/կամ ցանկացած ուժային կազմավորումներում:

12.3.7 Ապահովագրված անձի գործատուի մեղավորությամբ ապահովագրական պատահար տեղի ունենալը:

12.3.8 Ապահովագրված անձին վնաս պատճառվելը փոխադրող ընկերությունների, տուրօպերատորների/տուրիստական գործակալությունների, անմիջապես Ապահովագրված անձի և ճանապարհորդության կազմակերպման ու անցկացման հետ կապ ունեցող այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից թույլ տրված սխալների/թերությունների արդյունքում:

13 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ապահովագրողն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

13.1 Ապահովադիրը/Ապահովագրված անձը խախտել է կամ չի կատարել Պայմանագրով և/կամ Պայմաններով նախատեսված իր պարտավորությունները:

13.2 Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին տրամադրվել են կեղծ, ապակողմնորոշիչ կամ ոչ ամբողջական տեղեկություններ և/կամ ապացույցներ Ապահովագրված անձի և/կամ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ կամ Ապահովագրողին է ներկայացվել ՀՀ օրենսդրության կամ Ապահովագրության տարածք հանդիսացող երկրի օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր:

13.3 Ապահովագրված անձի (Ապահովադրի) կողմից իրականացվել են դիտավորյալ գործողություններ, որոնք ուղղված են եղել կամ նպաստել են Ապահովագրական պատահարի տեղի ունենալուն կամ պատճառված վնասի չափի մեծանալուն:

13.4 Ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին Ապահովադիրն Ապահովագրողի նկատմամբ ունի Ապահովագրավճարի գծով ժամկետանց պարտավորություններ:

13.5 Ապահովագրված անձը/Ապահովադիրը ներկայացրել է Ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած վնասի հատուցման պահանջ:

13.6 Ծախսերը առաջացել են Ապահովագրված անձի մշտական բնակության վայր վերադառնալուց, ինչպես նաև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո, բացառությամբ Հավելված 1-ի 1.8 կետով նախատեսված դեպքերի:

13.7 Ապահովագրված անձը կամ Շահառուն ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեն այլ աղբյուրներից, այդ թվում՝ այլ ապահովագրական ընկերություններից և/կամ այլ պայմանագրերի հիման վրա:

13.8 Ծախսերը կապված են այնպիսի հիվանդությունների կամ վիճակների հետ, որոնք վերջին վեց ամիսների ընթացքում՝ մինչև Ապահովագրված անձի ճանապարհորդության մեկնելը կամ Պայմանագրի գործողության ժամկետի սկսվելը, բժշկական միջամտություն են պահանջել:

13.9 Ծախսերը կապված են ախտորոշիչ խորհրդատվությունների, լաբորատոր-գործիքային հետազոտությունների հետ, որոնց չի հաջորդել բուժման նշանակում:

13.10 Ծախսերը կապված են անգիոգրաֆիայի, ինչպես նաև սրտանոթային վիրաբուժության հետ, այդ թվում՝ կորոնար անոթների ստենտավորման և շունտավորման հետ, նույնիսկ եթե դրանց իրականացման համար առկա են բժշկական ցուցումներ:

13.11 Ծախսերը կապված են այլընտրանքային և փորձարարական բժշկության մեթոդներով բուժման հետ, այդ թվում՝ իրիդոդիագնոստիկա, աուրիկուլո-դիագնոստիկա, բիոռեզոնանսային ախտորոշում, էլեկտրոնային բիոֆունկցիոնալ օրգանոմետրիա, էներգոինֆորմատիկա, ցուբոթերապիա, էլեկտրաասեղնաբուժություն, հիրուդո-թերապիա, ֆիտոթերապիա, հոմեոպաթիա, ախտորոշում Ֆոլլի մեթոդով և այլն:

13.12 Ծախսերը կապված են հղիության վարման և ծննդաբերության, դրանց ընթացքում՝ Ապահովագրված անձի խորհրդատվական–ախտորոշիչ զննման անցկացման, հղիության բարդացումների վերացման, հղիության ընդհատման, հղիության հետևանքով քրոնիկ հիվանդությունների սրացման բուժման հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական օգնությունն իրականացվում է Ապահովագրված անձի կամ պտղի կյանքը փրկելու ցուցումով:

13.13 Ծախսերը կապված են բուժող բժշկի ցուցումներին չհետևելու կամ ոչ պատշաճ հետևելու, ինչպես նաև ինքնաբուժությամբ զբաղվելու և/կամ բժշկի կողմից չնշանակված կամ նշանակվածից ավել կամ պակաս դեղորայք օգտագործելու հետևանքով առաջացած հիվանդությունների կամ առողջության խանգարումների/խնդիրների, ինչպես նաև բուժումն ուշացնելու պատճառով առաջացած հիվանդության և/կամ վիճակների ախտորոշման և բուժման հետ:

13.14 Ծախսերը կապված են լրացուցիչ ծառայությունների, մասնավորապես՝ առանձնահատուկ հարմարավետ հիվանդասենյակի, բժշկական հաստատություններում հատկացվող սննդի, անհատական խնամքի միջոցների, հիվանդասենյակում հեռուստացույցի, օդորակիչի առկայության, թարգմանչի, մերսման, վարսավիրի և այլ ծառայությունների ստացման հետ:

13.15 Ծախսերը կապված են ցանկացած կանխարգելիչ հետազոտությունների, ընդհանուր բժշկական զննումների կամ պատվաստումների հետ:

13.16 Կատարված ծախսերի գծով չեն ներկայացվել կամ թերի են ներկայացվել հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը, ինչպես նաև այն

ծախսերի գծով, որոնք չունեն հիմնավորված բժշկական ցուցում կամ բժշկական ցուցումն ընդհանրապես բացակայում է:

13.17 Ծախսերը կապված են Բժշկական հաստատություն չհամարվող անձանց կողմից ծառայությունների մատուցման հետ:

13.18 Ծախսերը կապված են Ապահովագրված անձի բուժման կուրսի հետ, որը սկսվել է մինչև Ապահովագրված անձի ճանապարհորդության մեկնելը կամ Պայմանագրի գործողության ժամկետի սկսվելը և շարունակվել է Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում, կամ եթե տվյալ ճանապարհորդությունը նախաձեռնվել է՝ հաշվի չառնելով դրա համար առկա հակացուցումները:

13.19 Ապահովագրված անձը կամավոր հրաժարվել է ապահովագրական պատահարի հետ կապված բժշկին դիմելուց և նրանից ստացած ցուցումների ու նշանակումների կատարումից:

13.20 Ծախսերը կապված են 70 (յոթանասուն) տարեկանից բարձր Ապահովագրված անձի ռեպատրիացիայի հետ:

13.21 Ծախսերը կապված են առանց բժշկի ցուցումների իրականացված ընդհանուր բուժզննումների և խորհրդատվությունների իրականացման և դեղորայքի ձեռքբերման, ոչ ավանդական բժշկական բուժման հետ:

13.22 Ծախսերը չեն իրականացվել բժշկական հաստատության կամ բժշկի ծառայություններից օգտվելու ժամանակ կամ վերջիններիս ցուցումով կամ խորհրդով:

13.23 Ծախսերը կատարվել են Ապահովագրված անձի խնամողների՝ Ընտանիքի անդամների, բարեկամների, հարազատների համար, բացառությամբ Հավելված 2-ի 1.2 կետով նախատեսված դեպքերի:

13.24 Ապահովագրված անձը Պայմանագիրը կնքելու պահին չի գտնվել ՀՀ կամ ԱՀ տարածքում:

13.25 Եթե պատահարը հետևանք և/կամ պատճառ է Ապահովագրված անձի կողմից ցանկացած տեսակի վճարովի ծառայություն մատուցելու կամ աշխատանք կատարելու կամ հասարակական կամ կամավորական բնույթի գործունեություն իրականացնելու, եթե անգամ Ապահովագրված անձն Ապահովագրության տարածքում չունի համապատասխան աշխատանքային պայմանագիր:

13.26 Ապահովագրված անձի (նրա օրինական շահերը և իրավունքները ներկայացնող անձի), Շահառուի կամ նրանց իրավահաջորդի կողմից չեն կատարվել Պայմաններով սահմանված դրույթներն ու պարտականությունները, այդ թվում՝ չեն ներկայացվել հատուցման դիմումին կից Պայմաններով սահմանված և Ապահովագրողի կողմից լրացուցիչ պահանջված փաստաթղթերի ամբողջական փաթեթները:

14 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14.1 Ապահովագրական հատուցման գծով Ընկերությանը ներկայացված արտարժույթով ծախսերը Ապահովադրին և/կամ Ապահովագրված անձին հատուցվում են տվյալ արտարժույթին համարժեք ՀՀ դրամի սահմաններում, որը հաշվարկվում է ապահովագրական հատուցման որոշման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

14.2 Եթե Ապահովագրված անձի կողմից հատուցում ստանալու համար ներկայացված փաստաթղթերը օտար լեզվով են, ապա դրանց պետք է կցված լինեն որակավորված թարգմանչի կողմից կատարված թարգմանությունները, Ապահովագրողի պահանջով՝ նաև դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

14.3 Ապահովագրողը գրավոր ձևով Ապահովադրին կամ Ապահովագրված անձին կարող է ազատել Պայմաններով սահմանված որոշակի փաստաթղթերի ներկայացման կամ որոշակի գործողությունների իրականացման պարտականությունից:

14.4 Պայմանների իմաստով Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Ապահովագրված անձին) ուղարկված բոլոր ծանուցումները, որոշումները և գրությունները (այսուհետ միասին՝ Ծանուցում) համարվում են պատշաճ ծանուցված (առաքված), եթե կատարվել են հետևյալ եղանակներից որևէ մեկով.

14.4.1 Ծանուցումը ուղարկվել է փոստային առաքմամբ՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված հասցեով:

14.4.2 Ծանուցումը ուղարկվել է բջջային հաղորդագրությամբ՝ Պայմանագրում կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) և/կամ նրա լիազորված անձի կամ իրավահաջորդի կողմից տրամադրված այլ փաստաթղթի մեջ (հայցային դիմում, հայտարարություն և այլն) նշված հեռախոսահամարին:

14.4.3 Ծանուցումը ուղարկվել է էլեկտրոնային նամակի տեսքով՝ Պայմանագրում կամ հայցային դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

14.5 Վերոնշյալ հասցեների և/կամ Պայմանագրում նշված կողմերի տվյալների (հասցե, հեռախոսահամար, բանկային տվյալներ և այլն) փոփոխության դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին: Եթե Ապահովագրողը չի տեղեկացվել հիշյալ փոփոխությունների մասին, ապա Ապահովադրին (Ապահովագրված անձին) բոլոր Ծանուցումները ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են պատշաճ առաքված (հանձնված), իսկ Ապահովադիրը (Ապահովագրված անձը)՝ պատշաճ ծանուցված, անկախ փաստացի ծանուցված

լինելու հանգամանքից: Նման դեպքում Ծանուցման սկիզբ է համարվում դրա ելքի ամսաթիվը:

14.6 Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերը կարող են երկկողմանի համաձայնագիր կնքելու միջոցով փոփոխել և/կամ լրացնել Պայմանագրի դրույթները, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

14.7 Պայմանագրից և Պայմաններից ծագող բոլոր տարաձայնությունները ենթակա են լուծման Պայմանագրում նշված և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

14.8 Պայմանագրից և Պայմաններից բխող իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

14.9 Պայմանագրի և Պայմանների դրույթների միջև անհամապատասխանություն լինելու դեպքում գերակայությունը տրվում է Պայմանագրին:

14.10 Պայմանների և նրա թարգմանությունների տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

14.11 Սույն պայմանների իմաստով ծախսերի ողջամտությունը (ողջամիտ գինը) որոշվում է Ապահովագրողի գործընկեր Աջակցող ընկերությունների՝ վերջիններիս հետ համագործակցող կազմակերպությունների տրամադրած գների հետ համեմատության արդյունքում: Կատարված ծախսերի՝ հիշյալ գների միջինից բարձր գնի դեպքում Ապահովագրողը ընտրում է հիշյալ գների միջինը

Հավելված 1

ԾՐԱԳԻՐ Ի. ՍՏԱՆԴԱՐՏ ԾՐԱԳԻՐ

1.1 Սույն Պայմաններով սահմանված սահմանաչափերը և բացառությունները հաշվի առնելով՝ Ապահովագրական պատահար են հանդիսանում Պայմանագրի գործողության ժամկետում և Ապահովագրության տարածքում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարը կամ հանկարծակի հիվանդության առաջացումը, որոնց կապակցությամբ Ապահովագրված անձը Պայմանագրով սահմանված կարգով բժշկական և/կամ շտապ (անհետաձգելի) օգնության համար դիմել է Բժշկական հաստատություն՝ Ապահովագրողի և/կամ Աջակցող ընկերության կարգադրությամբ/հրահանգով կամ ցուցումով:

1.2 Սույն ծրագրի շրջանակներում հատուցման ենթակա են շտապ (անհետաձգելի) բժշկական օգնության, բժշկական էվակուացիայի և ռեպատրիացիայի հետ կապված այն ծախսերը, որոնք առաջացել են.

1.2.1 հանկարծակի հիվանդության ի հայտ գալու արդյունքում:

1.2.2 դժբախտ պատահարի հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների արդյունքում:

1.2.3 սուր ատամնացավի արդյունքում, որն առաջացել է ատամի կակղանի սուր բորբոքումից (պուլպիտ) կամ դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքից:

1.2.4 Ապահովագրված անձի շտապ (անհետաձգելի) տեղափոխում կազմակերպելու արդյունքում, եթե Ապահովագրված անձի ինքնուրույն տեղաշարժվելու անհնարինության դեպքում կազմակերպվել է նրա շտապ (անհետաձգելի) տեղափոխումը դեպի՝

1.2.4.1 մոտակա բժշկական հաստատություն՝ նրան անհրաժեշտ բժշկական օգնություն ցուցաբերելու համար:

1.2.4.2 Ապահովագրված անձի մշտական բնակության վայր՝ Ապահովագրողի համաձայնության առկայության դեպքում:

1.2.5 Պայմանագրի գործողության ժամկետում և ապահովագրության տարածքում հանկարծակի հիվանդության կամ տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով մահացած Ապահովագրված անձի աճյունի ռեպատրացիայի արդյունքում:

1.3 Հավելված 1-ի 1.2 կետում նշված բժշկական օգնության գծով ծախսերը ներառում են՝

1.3.1 շտապ (անհետաձգելի) բուժօգնության հետ կապված ծախսերը:

1.3.2 ստացիոնար բուժման, ներառյալ՝ վիրահատությունների, դիագնոստիկ հետազոտությունների, բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապական և անշարժացնող միջոցների, ինչպես նաև հիվանդասենյակի (հատուցվում է էկոնոմ տիպի հիվանդասենյակի արժեքը) հետ կապված ծախսերը:

1.3.3 ամբուլատոր բուժման, ներառյալ՝ բժշկական խորհրդատվությունների, դիագնոստիկ հետազոտությունների, ինչպես նաև բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապական և անշարժացնող միջոցների հետ կապված ծախսերը:

1.3.4 ատամի կակղանի բորբոքման (պուլպիտի) արդյունքում սուր ատամնացավի առաջացման և/կամ դժբախտ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների դեպքում շտապ ատամնաբուժական օգնության համար կատարված ծախսերը:

1.4 Բժշկական էվակուացիայի ծախսերը ներառում են՝

1.4.1 Պատահարի վայրից դեպի ամենամոտ գտնվող բժշկական հաստատություն տեղափոխման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ճանապարհորդության երկրի տարածքում այլ բժշկական հաստատություն տեղափոխման հետ կապված ծախսերը, որոնք կատարվել են բուժող բժշկի հանձնարարականով և գրավոր ձևով հաստատվել են Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից:

1.4.2 Ճանապարհորդության վայրից մինչև Ապահովագրված անձի մշտական բնակության վայրը՝ համապատասխան տրանսպորտային միջոցով բժշկական էվակուացիայի իրականացման հետ կապված ծախսերը միայն այն դեպքում, երբ տվյալ երկրում հնարավոր չէ մատուցել անհրաժեշտ բժշկական օգնություն, ինչը հաստատվում է համապատասխան բժշկական փաստաթղթով, և դրա անհրաժեշտությունը գրավոր ձևով հաստատվել է Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից: Բժշկական էվակուացիայի հետ կապված ծախսերը հատուցվում են Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

1.5 Ռեպատրացիայի ծախսերը ներառում են դեպի ՀՀ կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ Ապահովագրված անձի մշտական բնակության վայր տեղափոխման ծախսերը: Ռեպատրիացիան կազմակերպվում է Աջակցող ընկերության կողմից կամ Ապահովագրողի համաձայնությամբ՝ այլ եղանակով: Ապահովագրված անձի Ընտանիքի անդամների հետ գրավոր համաձայնեցմամբ աճյունի տեղափոխումը կարող է փոխարինվել Ապահովագրության տարածքում դիակիզումով:

1.6 Ապահովագրողի կողմից հատուցումները վճարվում են, եթե մատուցված բժշկական, բժշկական էվակուացիայի ծառայությունները համապատասխանում են Ապահովագրված անձի առողջական վիճակին, նրա կողմից ներկայացված գանգատներին, ախտանշաններին կամ ախտորոշմանը, անհրաժեշտ և ցուցված են տվյալ տեսակի հիվանդության, վնասվածքի կամ բժշկական միջամտության համար, ընդ որում՝ տվյալ ծառայությունները չպետք է իրականացվեն բացառապես Ապահովագրված անձի, բժշկի կամ բժշկական օգնություն իրականացնող անձի հարմարավետությունից ելնելով, և նշված դեպքերի համար սահմանված վճարումները պետք է լինեն ողջամիտ և համապատասխանեն նման դեպքերի համար տվյալ տարածաշրջանում ընդունված վճարների չափին:

1.7 Ապահովագրված անձի հուղարկավորության հետ կապված բոլոր ծախսերը հատուցման ենթակա չեն:

1.8 Եթե Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի մոտենալու պահին Ապահովագրված անձի ճանապարհորդությունից վերադարձը հնարավոր չէ ապահովագրական պատահարով պայմանավորված վերջինիս հոսպիտալացման պատճառով, որը հաստատվում է համապատասխան բժշկական արձանագրությամբ, ապա Ապահովագրողը կատարում է Հավելված 1-ով նախատեսված և տվյալ պատահարով պայմանավորված իր պարտականությունները 4 (չորս) շաբաթվա ընթացքում՝ հաշված Պայմանագրում՝ որպես Պայմանագրի գործողության ժամկետի ավարտի ամսաթիվ սահմանված օրվանից:

2 ՍՏԱՆԴԱՐՏ ԾՐԱԳՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով, ապա Ապահովագրված անձին ցուցաբերված ցանկացած տեսակի ծառայությունների համար կատարված ծախսերը հատուցման ենթակա չեն հետևյալ դեպքերում.

2.1.1 եթե ծախսերը կապված են Ապահովագրված անձին ատամնաբուժական օգնության տրամադրման հետ, բացառությամբ Հավելված 1-ի 1.3.4 կետի:

2.1.2 Եթե Ապահովագրված անձի մոտ ծագած հիվանդությունները, առողջական խնդիրները կամ դժբախտ պատահարը չեն պահանջում բժշկական էվակուացիա, շտապ (անհետաձգելի) բժշկական օգնություն և չեն խոչընդոտում Ապահովագրված անձի ճանապարհորդությունը շարունակելուն:

2.1.3 Եթե առաջացած վնասվածքը, հիվանդությունը կամ մահը Ապահովագրված անձի կողմից ինքն իրեն դիտավորյալ վտանգի ենթարկելու, անդամախեղության, ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հետևանք է:

2.1.4 Եթե ծախսերը կապված են քրոնիկ հիվանդությունների, դրանց սրացումների և քրոնիկ հիվանդությունների հետևանքով առաջացած բարդությունների հետ:

2.1.5 Եթե ծախսերը կապված են նևրոզների (ասթենո-նևրոտիկ համախտանիշ, վեգետո-անոթային դիստոնիա, կպչուն վիճակներ և այլն) վերաբերյալ խորհրդատվության, հետազոտման (ներառյալ դիֆերենցիալ դիագնոստիկա) և բուժման, հոգեկան հիվանդությունների, պսիխոպաթիայի, պսիխոզի, սահմանային վիճակների, թմրամոլության, ալկոհոլիզմի, տոքսիկոմանիայի կանխման և բուժման հետ:

2.1.6 Եթե ծախսերը կապված են օնկոլոգիական հիվանդությունների ախտորոշման և բուժման, դրանց բարդացումներով և հետևանքներով պայմանավորված ցանկացած բժշկական ծառայություններ, գործողություններ և/կամ միջամտություններ իրականացնելու հետ՝ անկախ բարդության աստիճանից, ինչպես նաև բարորակ նորագոյացությունների, այդ թվում՝ հեմոբլաստոզների, էնդոմետրիոզի հետազոտության, ախտորոշման և բուժման, դրանց բարդացումների և հետևանքների հետ:

2.1.7 Եթե ծախսերը կապված են արևային այրվածքների, արևային ալերգիայի և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցության հետևանքով մաշկի ախտահարումների և/կամ արևահարության ախտորոշման և բուժման հետ՝ անկախ բարդության աստիճանից:

2.1.8 Եթե ծախսերը կապված են օնիխոկրիպտոզի (ներաճած եղունգ) և դրանից բխող բարդությունների հետ:

2.1.9 Եթե ծախսերը կապված են վիրուսային հեպատիտների, առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների, ՄԻԱՎ վարակ-

ման և/կամ ցանկացած այլ համանման համախտանիշի/հիվանդության, դրանց հետևանքների և բարդացումների ախտորոշման և բուժման հետ:

2.1.10 Եթե ծախսերը կապված են պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության, տրանսպլանտոլոգիայի (օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում), սեռափոխության, ցանկացած տեսակի պրոթեզավորման և/կամ էնդոպրոթեզավորման, ներառյալ՝ ատամնաբուժական և ակնաբուժական պրոթեզավորման հետ:

2.1.11 Եթե ծախսերը կապված են պրոթեզների, էնդոպրոթեզների, բժշկական սարքավորումների, իմպլանտների, տեսողական և լսողական սարքերի, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքների, հաշմանդամային սայլակների, օրթոպեդիկ սարքերի, մետաղական կոնստրուկցիաների (բացառությամբ դժբախտ պատահարի արդյունքում բժշկի կողմից մետաղական կոնստրուկցիաների ցուցման դեպքում) ձեռքբերման հետ:

2.1.12 Եթե ծախսերը կապված են լազերոթերապիայի, մագնիսաթերապիայի, մանուալ թերապիայի, ասեղնա-ռեֆլեքսոթերապիայի, ջրային բուժման, ակուպունկտուրայի, ֆիզիոթերապիայի, բուժական մարմնամարզության, կինեզիթերապիայի, էլեկտրոֆորեզի, ֆոնոֆորեզի, ամպլիմպուլս թերապիայի, հարվածա-ալիքային թերապիայի, ԳՁՀ և ՈՒՄՃ թերապիայի հետ:

2.1.13 Եթե ծախսերը կապված են կոսմետիկ և պլաստիկ վիրահատությունների հետ և չեն իրականացվում Ապահովագրված անձի կյանքը փրկելու ցուցումով և/կամ չեն հանդիսանում վերջինիս սեփական օրգանները պահպանելու համար անհրաժեշտ վիրահատություններ:

2.1.14 Եթե ծախսերը կապված են Ապահովագրված անձի այն հիվանդության (այդ թվում՝ կյանքին վտանգ սպառնացող) հետ, որի կապակցությամբ առկա են եղել ճանապարհորդության մեկնելու բժշկական հակացուցումներ, և/կամ որի բուժման նպատակով վերջինս մեկնել է ճանապարհորդության: Նշված իրադարձության դեպքում Ապահովագրողը ազատվում է նաև ռեպատրիացիայի ծախսերից:

2.2 Ապահովագրական հատուցում չի վճարվում այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ստանում է վնասի հատուցում այլ անձանցից, այդ թվում՝ վնաս պատճառող անձից:

3 ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Բժշկական և բժշկական էվակուացիայի ծախսերի ինքնուրույն վճարման դեպքում Ապահովագրված անձը կատարված ծախսերի դիմաց հատուցում ստանալու նպատակով ՀՀ տարածք վերադառնալուց հետո, իսկ ռեպատրիա-ցիայի դեպքում՝ Ապահովագրված անձի իրավահաջորդը ռեպատրիացիան

իրականացվելուց հետո Պայմաններով նախատեսված ժամկետներում Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝

3.1.1 Հատուցում ստանալու համար համապատասխան դիմում:

3.1.2 Պայմանագիրը:

3.1.3 բժշկական փաստաթղթեր (Ապահովագրված անձի գանգատների, կատարված հետազոտությունների, ախտորոշման, բուժման, նշանակված դեղորայքի մասին լիարժեք տեղեկատվություն պարունակող ցանկացած փաստաթուղթ), բուժող բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսը, որը ներառում է դեղորայքի արժեքները և դեղատան կնիքը (առկայության դեպքում), մահվան առաջացման առաջնային պատճառի (հանկարծակի հիվանդության ախտորոշման կամ դժբախտ պատահարի) վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը (ախտաբանաանատոմիական հերձման արդյունքները, պաթոլոգոանատոմիական հետազոտության արդյունքները, դատաբժշկական եզրակացությունը և այլն), Ապահովագրված անձի՝ մինչև մահվան գրանցումը բժշկական հաստատությունում կատարված բժշկական ծառայությունների վերաբերյալ փաստաթղթեր, մահվան էպիկրիզ և այլ բժշկական փաստաթղթեր:

3.1.4 Ապահովագրված անձին տրամադրված ծառայության համար, այդ թվում՝ հիվանդանոց տեղափոխելու կամ ռեպատրիացիան կազմակերպելու նպատակով տրված փաստաթղթերը, բժշկական հաստատությունների կողմից տրված հաշիվ-ապրանքագրերը՝ բժշկական կազմակեպության կնիքով, որի մեջ նշված է Ապահովագրված անձի անունը, ազգանունը, բուժօգնության դիմելու ամսաթիվը, բժշկական եզրակացությունը, տրամադրված ծառայությունները՝ ըստ գների և բուժման տևողության:

3.1.5 ռեպատրիացիայի դեպքում Ապահովագրված անձի իրավահաջորդի ժառանգության իրավունքի վկայականը, իրավահաջորդի անձը հաստատող փաստաթուղթը, իրավահաջորդի սոցիալական քարտը կամ ՀԾՀ հատկացնելու մասին տեղեկանքը (առկայության դեպքում), մահվան վկայականը:

3.1.6 Ապահովագրողի պահանջով այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

3.2 Ապահովագրողն ապահովագրական գումարի սահմաններում կատարում է Ապահովագրված անձին մատուցած ծառայությունների գծով հաշիվների վճարում կամ հատուցում է Ապահովագրված անձի կամ Ապահովադրի կամ նրանց Ընտանիքի անդամի կողմից կատարված ծախսերը՝ այդ ծառայություն-ները ստանալու համար Ապահովագրված անձի կողմից ծառայությունների մատուցման համար վճարման փաստը հավաստող, ինչպես նաև սույն բաժնում նշված փաստաթղթերի ներկայացման դեպքում:

3.3 Ապահովագրական հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է Պայմանագրով և Պայմաններով սահմանված սահմանաչափերով (ենթասահմանաչափերով) ու դիմում ներկայացրած անձի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

3.4 Պատահարի կապակցությամբ ներկայացված փաստաթղթերում բժշկական ծառայությունների գծով գները յուրաքանչյուր ծառայության համար առանձին ներկայացված չլինելու դեպքում Ապահովագրական պատահարի գծով կատարված ծախսերը փոխհատուցելու նպատակով ապահովագրական հատուցման չափը որոշելիս Ապահովագրողը կարող է հիմնվել հետևյալ տեղեկատվության աղբյուրներից որևիցե մեկի վրա՝

3.4.1 Ապահովագրված անձին տվյալ ծառայությունը մատուցած բժշկական հաստատության կայքում այդ ծառայության գծով տեղադրված գները:

3.4.2 Ապահովագրական պատահարի գծով տվյալ ծառայության գնի վերաբերյալ Աջակցող ընկերության կողմից տրամադրված տեղեկատվությունը:

3.4.3 Ապահովագրողի կողմից նախկինում ապահովագրական հայտերը կարգավորելիս տվյալ ծառայության գծով կիրառված գները՝ հաշվի առնելով փաստացի վճարման երկրի գնաճը:

Հավելված 2

ԾՐԱԳԻՐ II. ԿՈՄՖՈՐՏ ԾՐԱԳԻՐ

Ստորև շարադրված ռիսկերը կիրառվում են Ապահովադրի կողմից լրացուցիչ ապահովագրական վճարի վճարման և դրանք Պայմանագրում նշված լինելու դեպքում: Ընդ որում, Ապահովադրի ցանկությամբ Պայմանագրում կարող են նշվել մեկ, մի քանի կամ ստորև նշված բոլոր ռիսկերը:

1. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ: Տրանսպորտային ծախսերը հատուցվում են ստորև նշված դեպքերում.

1.1 Ապահովագրված անձի վերադարձ մշտական բնակության վայր: Տրանսպորտային ծախսերը ներառում են Տոմսի արժեքը Ապահովագրված անձի մշտական բնակության վայր վերադառնալու համար: Նշված ծախսերը հատուցվում են այն դեպքում, երբ Ապահովագրված անձի վերադարձը տեղի չի ունեցել ժամանակին՝ Ապահովագրված անձի մոտ առկա ճանապարհային փաստաթղթերում նշված օրը, Ապահովագրված անձի ստացիոնար բուժման անհրաժեշտությանը հանգեցրած ապահովագրական պատահարի տեղի ունենալու պատճառով կամ դրա արդյունքում ճանապարհորդությունը շարունակելու հակացուցման դեպքում: Ապահովագրված անձը և/կամ նրա հետ ճանապարհորդող անձը պարտավոր է իրականացնել պահանջվող

գործողությունները չօգտագործված տոմսերը վերադարձնելու և դրանից ստացված գումարը Ապահովագրողին տրամադրելու ուղղությամբ, հակառակ դեպքում Ապահովագրողը Ապահովագրված անձին տրամադրվող հատուցումը կնվազեցնի չօգտագործված տոմսերի արժեքի չափով:

1.2 Ընտանիքի անդամի այցը Ապահովագրության տարածք: Եթե ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրված անձը հայտնվել է այնպիսի վիճակում, որի դեպքում, համաձայն բժշկի ցուցման, ունի խնամողի կարիք և վերջինիս հետ չկա խնամքն իրականացնող անձ, ապա Ապահովագրողը վճարում է Ապահովագրված անձի Ընտանիքի անդամի՝ Ապահովագրված անձի մոտ այցի համար անհրաժեշտ երկկողմանի (մշտական բնակության վայրի հետադարձով) Տոմսի արժեքը: Ապահովագրված անձի Ընտանիքի անդամի՝ արտերկրում գտնվելու ծախսերն Ապահովագրողը չի հատուցում:

1.3 Երեխաների էվակուացում: Եթե Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով նրա հետ ճանապարհորդող անչափահաս երեխաները մնացել են առանց խնամակալի, ապա Ապահովագրողը երաշխավորում է նրանց՝ իրենց մշտական բնակության վայր վաղաժամկետ վերադառնալու կազմակերպումն ու դրա համար վճարումը՝ Տոմսի արժեքի կամ արդեն իսկ առկա տոմսի ամսաթվի փոփոխման հետ կապված ծախսի չափով: Անչափահաս երեխաների վերադառնալու կազմակերպումը և վճարումն իրականացնում է Աջակցող ընկերությունը՝ իր միջոցների հաշվին, կամ եթե Աջակցող ընկերությանը կամ Ապահովագրողին նախապես տեղեկացնելով անչափահաս երեխաների վերադարձի կազմակերպումը և վճարումն իրականացրել է երեխաների շահերը ներկայացնող անձը, ապա այդ ծախսը փոխհատուցվում է երեխաների մշտական բնակության վայրում, ծախսը կատարած անձին:

2. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ՈՒՂԵԲԵՌԻ ԿՈՐՈՒՍՏ

2.1 Ուղեբեռ է համարվում բացառապես անձնական նպատակներով օգտագործման համար (նրան սեփականության իրավունքով պատկանող, չվարձակալած, չփոխառնված և այլն) նախատեսված՝ Ապահովագրված անձի ճանապարհորդության ընթացքում փոխադրվող անձնական իրերը (բացառությամբ ձեռքի ծանրոցների, որոնք տեղափոխվում են Ապահովագրված անձի կողմից ինքնուրույն և գտնվում են ուղևորների համար նախատեսված փոխադրամիջոցի սրահում), որը պատշաճ ձևակերպվել և հանձնվել է փոխադրողին՝ Ապահովագրված անձի մշտական բնակության վայրից դեպի Ապահովագրության տարածք և հետ մշտական բնակության վայր տեղափոխվելու ժամանակ, ինչպես նաև Ապահովագրված անձի՝ Ապահովագրության տարածքի մեջ մտնող երկրների (տարածքների) միջև երթևեկելիս:

2.2 Ապահովագրական պատահար է համարվում գրավոր ձևով հաստատված և ճանապարհորդության ժամանակ փոխադրումն իրականացնող փոխադրող կազմակերպությանը (այսուհետ՝ Փոխադրող) հանձնված ուղեբեռի ամբողջական կորուստը կամ ամբողջական ոչնչացումը:

2.3 Ուղեբեռի ամբողջական կորստի կամ ամբողջական ոչնչացման հետ կապված ծախսերը յուրաքանչյուր ապահովագրված անձի համար հատուցվում է 1000 (մեկ հազար) եվրոյի սահմաններում:

2.4 Ապահովագրողը հատուցում է նաև կորած ուղեբեռի որոնման, պահպանման և փոխադրման ծախսերը: Անուղղակի ծախսերը (հյուրանոցային կացության, սննդի, տրանսպորտային ծախսեր և այլն) հատուցման ենթակա չեն:

2.5 Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է ՝

2.5.1 24 ժամվա ընթացքում դիմել դեպքի վայրի իրավասու մարմիններին (տրասնպորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղական իրավապահ մարմիններ և այլն) այնպիսի փաստաթղթերի ստացման համար, որոնք արձանագրում են ուղեբեռի կորստի կամ ոչնչացման փաստը (օրինակ՝ փոխադրողի ներկայացուցչի կողմից կազմված առևտրային ակտ): Նշված մարմինների կողմից համապատասխան փաստաթղթերը պետք է լինեն ստորագրված և կնքված, իսկ նման փաստաթղթերի կազմումից հրաժարվելը՝ նշված մարմինների կողմից գրավոր ձևակերպված:

2.5.2 24 ժամվա ընթացքում ցանկացած հասանելի և տեղեկացման փաստը հավաստող եղանակով (հեռախոս, էլեկտրոնային նամակ, կարճ բջջային հաղորդագրություն և այլն) Ապահովագրողին կամ Աջակցող ընկերությանը տեղեկացնել պատահարի մասին:

2.6 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը Պայմաններով սահմանված ժամկետներում պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հատուցման դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

2.6.1 Պայմանագիրը:

2.6.2 Անձնագրի պատճենը:

2.6.3 Արտասահմանյան անձնագրի պատճենը կամ ՀՀ պետական սահմանը հատելու մասին սահմանային հսկողության նշումներով այլ փաստաթուղթ (միայն օտար երկրների քաղաքացիների համար):

2.6.4 Փոխադրողին ուղեբեռը փոխանցելու փաստը հաստատող փաստաթղթերի բնօրինակները (ուղեբեռի ստացական, պահպանմանը հանձնման ստացական և այլն):

2.6.5 Համապատասխան ուղևորության տոմսը և նստեցման կտրոնը:

2.6.6 Ուղեբեռի կորստի, ոչնչացման վերաբերյալ փոխադրողի կողմից տրված փաստաթղթի բնօրինակը (կոմերցիոն ակտ և այլն)՝ ստորագրված և կնքված:

2.6.7 Ուղեբեռի պահպանման համար պատասխանատու անձին ներկայացված հայցային դիմումի պատճենը և այլ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են փոխադրողին (պահպանման համար պատասխանատու կազմակերպությանը) փոխադրման պայմաններով սահմանված առավելագույն ժամկետի ընթացքում հայց ներկայացնելու համար:

2.7 Ապահովագրողն իրավունք ունի ներկայացված փաստաթղթերը ստուգել՝ ապահովագրական պատահարի մասին տեղեկություններ ունեցող կազմակերպություններին հարցումներ կատարելու միջոցով: Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողի՝ ապահովագրական պատահարի հետ կապված հարցերին տալ գրավոր բացատրություններ:

2.8 Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա չեն ստորև նշված իրադարձությունների արդյունքում ուղեբեռի կորուստը կամ վնասումը՝

2.8.1 Փոխադրողին պատշաճ չհանձնված ուղեբեռի, այդ թվում՝ ձեռքի ուղեբեռի, կորուստը կամ ոչնչացումը:

2.8.2 Ուղեբեռի ոչնչացմանը նպաստող Ապահովագրված անձի դիտավորյալ գործողությունների կամ անգործության, իրերի տեղափոխման կանոնները չպահպանելու հետևանքով առաջացած վնասը:

2.8.3 Իրավասու մարմինների կողմից տրված հանձնարարության հիման վրա ուղեբեռի բռնագրավումը կամ ոչնչացումը:

2.8.4 Ապահովագրված անձի մոտ գտնվող ձեռքի ծանրոցի, ինչպես նաև փոխադրողին հանձնված այն ուղեբեռի ոչնչացումը կամ կորուստը, որոնք ցանկացած պատճառով համապատասխան ձևակերպում չեն ստացել:

2.8.5 Միջատների և կրծողների կողմից ուղեբեռի վնասումը, մանր մակերեսային վնասվածքներ և ուղեբեռի առարկաների արտաքին տեսքի խաթարումը (քերծվածքներ, մաշվածություն և այլն), որոնք չեն հանգեցնում գույքի օգտակար հատկությունների կորստին կամ նվազեցմանը:

2.8.6 Պահպանման և/կամ փոխադրման հատուկ պայմաններ պահանջող ուղեբեռի ոչնչացումը կամ կորուստը՝ նշված պայմանները չպահպանելու հետևանքով:

2.8.7 Ուղեբեռի փոխադրման և պահպանման հետ կապված՝ Ապահովագրված անձի սեփական պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, այդ թվում՝ ուղեբեռի դիմաց վճարման, փաթեթավորման պայմանների և ուղեբեռը ժամանակին ստանալու գծով:

2.8.8 Ուղեբեռի ոչնչացումը կամ կորուստը, որը պատճառվել է անմիջապես ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող օդանավով կամ այլ օդային միջոցներով առաջացրած ճնշման ալիքներով:

2.8.9 Ճառագայթման, ցանկացած մաքրման, ներկման, վերանորոգման կամ վերականգնման գործընթացով պայմանավորված ուղեբեռի ոչնչացումը կամ կորուստը:

2.8.10 Մթնոլորտային տեղումների հետևանքով (անձրև, ձյուն և այլն) ուղեբեռի ոչնչացումը կամ կորուստը:

2.9 Ապահովագրողը չի իրականացնում ապահովագրական հատուցման վճարում, եթե ուղեբեռի կորստի կամ ոչնչացման արդյունքում պատճառված վնասները ամբողջությամբ հատուցվել են այլ անձանց կողմից:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Սույն բաժնի իմաստով ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովագրված անձի այն օրինական գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադրի կողմից երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի հատուցման հետ և չեն հակասում Ապահովագրության տարածքի օրենսդրությանը:

3.2 Սույն բաժնի իմաստով ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի անզգուշության հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը (մահ, աշխատունակության կորուստ, մարմնական վնասվածք) և/կամ գույքին հանցագործությամբ պատճառված վնասը, որը հասցվել է Ապահովագրության տարածքում, և տվյալ տարածքի/պետության օրենսդրության ուժով այդպիսի վնաս պատճառելու հանգամանքն առաջացնում է Ապահովագրողի՝ Պայմանագրով հատուցում վճարելու պարտավորություն: Միևնույն պատճառից ծագած՝ հերթականությամբ կամ միաժամանակ ի հայտ եկած մի շարք իրադարձությունների ազդեցության արդյունքում, մի քանի անձանց վնասի պատճառումը դիտվում է որպես մեկ ապահովագրական պատահար:

3.3 Ապահովագրական հատուցումն իրականացվում է այն չափով, որքանով դա նախատեսվում է վնասների հատուցման վերաբերյալ Ապահովագրության տարածքի օրենսդրությամբ՝ հաշվի առնելով Պայմաններով նախատեսված ենթասահմանաչափերը:

3.4 Այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի վերաբերյալ վեճերը բացակայում են, և տուժող կողմը իրավունք ունի ապահովագրական պատահարի հետևանքով հասցված վնասների սահմաններում հատուցում ստանալու, ապա Ապահովագրողի գրավոր համաձայնության դեպքում ներկայացված պահանջները կբավարարվեն, և ապահովագրական հատուցումը կիրականացվի արտադատական եղանակով: Այս դեպքում վնասի չափը և ապահովագրական հատուցման գումարը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ հասցված վնասի և դրա հետևանքների վերաբերյալ իրավասու մարմինների (բժշկական հաստատություններ, փորձագիտական մարմիններ, սոցիալական

ապահովության մարմիններ և այլն) կողմից տրված փաստաթղթերի, ինչպես նաև կատարված ծախսերը հավաստող վճարային հաշիվների, տեղեկանքների և այլ փաստաթղթերի հիման վրա: Անհրաժեշտության դեպքում վերոնշյալ փաստաթղթերի հիման վրա կազմվում է հատուցման վերաբերյալ համաձայնագիր, որը ստորագրվում է Ապահովագրողի, Ապահովադրի և տուժողի կողմից: Այս դեպքում, եթե տուժողը գտնվում է ՀՀ տարածքից դուրս, ապա Ապահովագրողի համաձայնությամբ ընդունվում է նաև տուժողի ստորագրությունը էլեկտրոնային եղանակով:

3.5 Վեճերի առկայության դեպքում, ապահովագրական հատուցումն իրականացվում է դատարանի (արբիտրաժային դատարան) օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի հիման վրա:

3.6 Ապահովագրական պատահարի հետ կապված ապահովագրական հատուցումը յուրաքանչյուր ապահովագրված անձի մասով տրամադրվում է առավելագույնը 5000 (հինգ հազար) եվրոյի սահմաններում:

3.7 Ապահովագրական հատուցման ենթակա են՝

3.7.1 Երրորդ անձ հանդիսացող տուժողի (այդ թվում՝ Ապահովագրված անձի Ընտանիքի անդամի) կյանքին կամ առողջությանը վնաս պատճառվելու դեպքում՝

3.7.1.1 աշխատավարձը, որը տուժողը կորցրել է առողջական խեղման կամ այլ վնասի պատճառով՝ աշխատունակության կորստի կամ դրա նվազման հետևանքով:

3.7.1.2 լրացուցիչ ծախսերը, որոնք անհրաժեշտ են առողջության վերականգնման համար (սնունդ, առողջարանային բուժում, կողմնակի խնամք, պրոթեզավորում, տրանսպորտային ծախսեր, ծախսեր՝ կապված վճարովի բժշկական ծառայությունների հետ):

3.7.1.3 տուժողի մահվան հետևանքով կերակրողին կորցրած անձի կրած վնասները:

3.7.1.4 հուղարկավորության ծախսերը:

3.7.2 Երրորդ անձանց գույքին վնաս պատճառվելու դեպքում՝

3.7.2.1 գույքի ուղղակի շուկայական արժեքը՝ ամբողջական ոչնչացման կամ մասնակի վնասման հետևանքով: Գույքի ամբողջական կորստի դեպքում հատուցումը որոշվում է նրա շուկայական արժեքի չափով՝ մասհանելով մաշվածությունը, իսկ մասնակի վնասվածքի դեպքում՝ անհրաժեշտ ծախսերի ծավալով, որն անհրաժեշտ է նախքան ապահովագրական պատահարը գույքի առկա վիճակը վերականգնելու համար:

3.7.2.2 պատահարի հանգամանքների և Ապահովագրված անձի մեղավորության աստիճանի նախնական պարզման նպատակով իրականացված ողջամիտ

ծախսերը, եթե տվյալ իրադարձությունը ճանաչվել է որպես ապահովագրական պատահար:

3.8 ՀՀ ոչ ռեզիդենտ տուժողի դեպքում հատուցումը վճարվում է արտարժույթով:

3.9 Սույն բաժնով սահմանված ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է՝

3.9.1 ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո ոչ ուշ, քան 5 ժամվա ընթացքում կապի հնարավոր միջոցներով հայտնել Աջակցող ընկերությանը և համապատասխան լիազոր մարմիններին, և ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի հետ կապված իրեն ներկայացված պահանջների մասին՝ Պայմանագրում նշված հեռախոսահամարով կամ էլ. փոստի միջոցով:

3.9.2 ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ տուժած անձանց կյանքը փրկելու կամ հասցված վնասները նվազեցնելու համար:

3.10 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն իր մշտական բնակության վայր վերադառնալուց հետո Պայմաններով սահմանված ժամկետներում պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

3.10.1 օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, որը պարունակում է տեղի ունեցած ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձի կողմից հատուցման ենթակա գումարի չափը, որը պետք է ներառված լինի Ապահովագրողի պատասխանատվության ծավալի մեջ:

3.10.2 փորձագետի կողմից կազմված եզրակացությունը՝ ապահովագրական պատահարի արդյունքում Երրորդ անձանց պատճառված վնասի պատճառների և հնարավոր հետևանքների մասին, եթե Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ պատահարի հետ կապված հանգամանքները հաստատվել են արտադատական կարգով:

3.10.3 Պայմանագիրը:

3.10.4 լիազորված մարմինների (բժշկական հաստատություն, բժշկական փորձագիտական մարմին, սոցիալական ապահովության մարմին, ոստիկանություն և այլն) կողմից տրված փաստաթղթեր, որոնք ներառում են պատահարի պատճառները և վնասի չափը:

3.10.5 տվյալ ապահովագրական պատահարի մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող այլ առկա փաստաթղթեր:

3.10.6 Ապահովագրողի պահանջով՝ պատահարի հետ կապված այլ փաստաթղթեր:

3.11 Եթե ապահովագրական հատուցումը Ապահովագրողի գրավոր համաձայնությամբ վճարվելու է Ապահովագրված անձին, ապա վերջինս պարտավոր է

ներկայացնել նաև իր կողմից տուժողին պատճառված վնասը հատուցելու մասին համապատասխան փաստաթղթերի, այդ թվում՝ վճարման անդորրագրերի բնօրինակները, որոնք չներկայացնելու դեպքում Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցումը ենթակա է մերժման:

3.12 Սույն բաժնով հատուցման ենթակա չեն հետևյալ դեպքերի և/կամ իրադարձությունների հետևանքով պատճառված վնասը՝

3.12.1 Ապահովադրի (Ապահովագրված անձի) կամ ցանկացած այլ անձի կողմից դիտավորությամբ հասցված վնասի հատուցման պահանջը: Դիտավորությամբ հասցված վնաս է համարվում համապատասխան անձի կողմից գիտակցաբար կատարված գործողությունը կամ թույլ տրված անգործությունը, որի հետևանքով տեղի է ունեցել ապահովագրական պատահար կամ ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականությունը բավականաչափ մեծացել է:

3.12.2 Ապահովագրված անձանց՝ միմյանց հանդեպ ներկայացված վնասի հատուցման այն պահանջները, որոնց պատասխանատվություններն ապահովագրված են Ապահովագրողի կողմից:

3.12.3 Ներկայացված այնպիսի վնասների հատուցման պահանջները, որոնք առաջացել են Ապահովագրողի կողմից Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրված ցուցումները չկատարելու համար:

3.12.4 Այն վնասները, որոնք առաջացել են Ապահովադրի կողմից օրենքի, որոշումների, տեխնիկական, տեղեկագրային և արտադրական կանոնների, նորմերի և նորմատիվային փաստաթղթերի խախտման հետևանքով:

3.12.5 Պայմանագրերի կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) հետ համաձայնեցված այլ ֆինանսական պարտավորությունների հետ կապված հատուցման պահանջները, ինչպես նաև վճարումները, որոնք կատարվում են որոշակի պարտավորությունների կատարման կամ պայմանագրերից բխող տույժերի փոխարեն:

3.12.6 Երաշխիքների կամ նմանատիպ պարտավորությունների չկատարման հետևանքով պատճառված վնասները կամ երաշխիքային պայմանագրերից բխող պահանջները:

3.12.7 Մտավոր սեփականության օբյեկտների, գյուտի կամ արտադրության օրինակների չթույլատրված օգտագործման, հեղինակային իրավունքի, հայտնագործության իրավունքի կամ նմանատիպ իրավունքների խախտման հետ կապված վնասների հատուցման պահանջները, ներառյալ՝ գրանցված ֆիրմային և ապրանքային նշանների, դրանց տարրերի և անվանման չթույլատրված օգտագործումը:

3.12.8 Բարոյական վնասների, այդ թվում՝ պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասների հետ կապված պահանջները:

3.12.9 Ոչ նյութական վնասների հետ կապված պահանջները:

3.13 Հատուցման ենթակա չէ ստորև նշված պատասխանատվության հետ կապված գործողությունների հետևանքով պատճառված վնասը, մասնավորապես՝

3.13.1 ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը:

3.13.2 Ապահովագրված անձի մասնագիտական գործունեության հետ կապված պատասխանատվությունը:

3.13.3 Ապահովագրված անձի կողմից վարձով (վարձույթ, լիզինգ), գրավով կամ պատասխանատու պահպանման հանձնված իրերի և/կամ տրանսպորտային միջոցների վնասվելու, ոչնչացման կամ փչացման դեպքերում առաջացած վնասների պատասխանատվությունը:

3.14 Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը՝

3.14.1 Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ տուժած երրորդ անձի կողմից նպատակաուղղված գործողությունների կամ անգործության հետևանքով, որոնք նպաստել են ապահովագրական պատահարի տեղի ունենալուն Ապահովադրի կամ այն անձի կողմից, ում օգտին կնքվել է Պայմանագիրը:

3.14.2 Եթե ապահովագրական պատահարը անմիջական պատճառահետևանքային կապի մեջ է Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձի կողմից կատարված դիտավորյալ հանցագործության հետ:

3.14.3 Եթե Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողին սխալ տեղեկատվություն է հաղորդվել ապահովագրության օբյեկտի, ապահովագրական ռիսկի փոփոխությունների և վնասի ծավալի մասին, խախտվել են ապահովագրական պատահարի մասին Ապահովագրողին հայտնելու ժամկետները կամ չեն ներկայացվել պատճառված վնասի փաստը և չափերը հաստատող փաստաթղթերը կամ Ապահովադրի և/կամ Ապահովագրված անձի կողմից նպատակաուղղված չեն կիրառվել նրա համար հասանելի միջոցները՝ հասցված վնասները նվազեցնելու համար:

4. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ԹՌԻՉՔԻ ՈՒՇԱՑՈՒՄ

4.1 Սույն բաժնի իմաստով ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովագրված անձի օրինական գույքային շահերը՝ կապված ճանապարհորդության ընթացքում թռիչքի ուշացման հետևանքով առաջացած հնարավոր չնախատեսված լրացուցիչ ծախսերի հետ:

4.2 Սույն բաժնի իմաստով լրացուցիչ ծախսեր են համարվում սննդի գնման, հյուրանոցի վարձակալության և այլ անհրաժեշտ ծառայություններից օգտվելու նպատակով կատարված ողջամիտ ծախսերը:

4.3 Սույն բաժնի իմաստով ողջամիտ են համարվում այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են Ապահովագրության տարածքի ներսում (ներառյալ տարանցիկ երկրներում) ժամանակավոր մնալու ընթացքում նվազագույն կենցաղային կարիքները հոգալու համար: Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք կատարվել են լրացուցիչ հարմարություններ կամ ծառայություններ ձեռք բերելու նպատակով, այդ թվում՝ զվարճանքի կենտրոններ, թանգարաններ, կինոթատրոններ, ցուցահանդեսներ և այլ վայրեր այցելելու (նշված հաստատությունների մուտքի տոմսեր ձեռք բերելու և այդ վայրերը հասնելու համար կատարված տրանսպորտային ծախսերը) կամ ցանկացած այլ նպատակով իրականացված ծախսերը:

4.4 Սույն բաժնի իմաստով ապահովագրական պատահար է համարվում ճանապարհորդության շրջանակներում նախատեսված կանոնավոր միջազգային (Ապահովագրության տարածքի ներսում (ներառյալ տարանցիկ երկրները) և Ապահովագրության տարածքից դեպի ՀՀ) չվերթի 6 և ավել ժամով ուշացումը:

4.5 Թռիչքի ուշացման հետ կապված 6-րդ ժամից սկսած՝ յուրաքանչյուր հաջորդող ժամի համար Ապահովագրողը տրամադրում է հատուցում 20 (քսան) եվրոյի, բայց յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար ոչ ավել, քան 300 (երեք հարյուր) եվրոյի սահմաններում:

4.6 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն իր մշտական բնակության վայր վերադառնալուց հետո Պայմաններով սահմանված ժամկետներում պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հատուցման դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

4.6.1 Ապահովագրված անձի՝ հետաձգված չվերթի տոմսը:

4.6.2 Փոխադրողի կամ տրանսպորտային ընկերության կողմից տրված պաշտոնական փաստաթուղթը (ստորագրված և կնքված), որով հաստատվում է չվերթի ուշացման փաստը՝ նշելով ուշացման պատճառը և տևողությունը, հետաձգման հետևանքով իր կողմից վճարված հատուցման չափը կամ այդ հատուցման մերժման փաստը:

4.6.3 Թռիչքի ուշացման հետևանքով իր կողմից կատարված ծախսերը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում՝ հյուրանոցում կամ ժամանակավոր կացության այլ վայրում մնալու ծախսերը՝ հաշիվ, վճարման անդորրագիր, ձեռքբերված սննդի և այլ ծառայություններից օգտվելու փաստը հավաստող վճարման կտրոնները՝ բնօրինակներով և դրանց պատշաճ ձևով կատարված թարգմանություններով:

4.7 Հատուցման ենթակա չէ այն վնասը (ծախսը), որն առաջացել է Ապահովագրված անձի՝ այդ չվերթի գրանցմանը ժամանակին չներկայանալու արդյունքում:

4.8 Թռիչքի ուշացման դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է՝

4.8.1 Անհապաղ դիմել փոխադրող ընկերության գրասենյակ՝ պահանջելով տրամադրել թռիչքի ուշացման փաստը հաստատող փաստաթուղթ:

4.8.2 Կատարել Հավելված 2-ի 4.6 կետում նշված գործողությունները:

5. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԸՆԴՀԱՏՈՒՄ

5.1 Սույն բաժնի իմաստով ապահովագրական պատահար է համարվում ճանապարհորդության վաղաժամկետ ընդհատումը, որը պայմանավորված է Ապահովագրված անձի մշտական բնակության վայրում Ապահովագրված անձի Ընտանիքի անդամներից որևէ մեկի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակով հրատապ հոսպիտալացման կամ Ընտանիքի վերոնշյալ անդամներից որևէ մեկի մահվան հանգամանքով:

5.2 Ապահովագրողը հատուցում է Ապահովագրված անձի ճանապարհորդությունից վաղաժամկետ վերադարձի հետևանքով կրած հետևյալ վնասները՝

5.2.1 արդեն իսկ առկա տոմսի ամսաթվի փոփոխման արդյունքում առաջացած գնային տարբերությունը:

5.2.2 Հյուրանոցային համարների ամրագրումը չեղարկելու հետևանքով պատճառված վնասը:

5.3 Ապահովագրական պատահար տեղի ունենալու ամսաթվից հետո Պայմաններով սահմանված ժամկետներում Ապահովագրված անձը պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

5.3.1 Ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթեր՝ Ապահովագրված անձի Ընտանիքի անդամի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակով հրատապ հոսպիտալացման վերաբերյալ համապատասխան Բուժհաստատության կնիքով վավերացված բժշկական հիմնավորում (էպիկրիզ, քաղվածք ամբուլատոր–բժշկական քարտից, բժշկի կոնսուլտացիոն եզրակացություն, Բուժհաստատության կողմից տրված տեղեկանք, պարակլինիկական հետազոտությունների պատասխանների պատճեններ և այլն) կամ Ապահովագրված անձի ընտանիքի անդամի մահվան վկայականը:

5.3.2 Ապահովագրված անձի և իր Ընտանիքի անդամի ազգակցական կապը հաստատող փաստաթղթեր:

5.3.3 Արդեն իսկ առկա տոմսի ամսաթվի փոփոխման արդյունքում առաջացած գնային տարբերությունը, ինչպես նաև ճանապարհորդության չկայացման հետևանքով հյուրանոցային համարների ամրագրումը չեղարկելու արդյունքում առաջացած վնասը հավաստող ֆինանսական փաստաթղթերը:

6. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿՈՐՈՒՍՏ

6.1 Սույն բաժնի իմաստով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի օրինական գույքային շահերը՝ կապված ճանապարհորդության ընթացքում Ապահովագրված անձի փաստաթղթերի (անձնագիր և այլն) կորստի կամ վնասման հետ, որի պատճառով վերջինիս ճանապարհորդությունը շարունակելը և/կամ իր մշտական բնակության վայր վերադառնալը դարձել է անհնար:

6.2 Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը հատուցում է կորած կամ վնասված փաստաթղթերի կրկնօրինակի ձեռք բերման կամ փոխարինման համար կատարած ծախսը՝ պայմանով, որ Ապահովագրված անձը այդ կորստի կամ վնասման հայտնաբերման պահից 24 ժամվա ընթացքում հայտնել է այդ մասին իր գտնվելու երկրի ոստիկանությանը և/կամ այդ երկրում վերջինիս մշտական բնակության երկրի հյուպատոսական ծառայություններին:

6.3 Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից իր փաստաթղթերն առանց հսկողության հասարակական վայրում թողնելու հետևանքով:

6.4 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձը իր մշտական բնակության վայր վերադառնալու պահից, Պայմանագրով սահմանված ժամկետների ընթացքում, պետք է Ապահովագրողին ներկայացնի հայտային դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

6.4.1 Փաստաթղթերի կորստի կամ վնասման վերաբերյալ պատահարը տեղի ունենալու երկրի ոստիկանության կողմից տրված արձանագրությունը կամ այլ պաշտոնական փաստաթուղթ կամ,

6.4.2 Փաստաթղթերի կորստի կամ վնասման վերաբերյալ հյուպատոսական ծառայությունների կողմից տրված հավաստագիրը կամ այլ պաշտոնական փաստաթուղթ:

6.4.3 Փաստաթղթերի փոխարինման կամ կրկնօրինակը ձեռք բերելու համար կատարված վճարումները հավաստող ֆինանսական փաստաթղթերը:

7. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ

7.1 Սույն բաժնի իմաստով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի օրինական գույքային շահերը՝ կապված ճանապարհորդության ընթացքում հնարավոր իրավաբանական ծառայություններից օգտվելու ծախսերի հետ:

7.2 Սույն բաժնի իմաստով Ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում փաստացի տեղի ունեցած իրադարձությունը, որի արդյունքում Ապահովագրված անձի մոտ ծագել է իրավաբանական օգնություն ստանալու անհրաժեշտություն՝ կապված Երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին

անզգուշությամբ, ինչպես նաև Ապահովագրված անձին Երրորդ անձանց կողմից պատճառված վնասի հատուցման պահանջով Ապահովագրված անձին դատական կամ վարչական վարույթի կամ նախնական քննության մեջ ներգրավելու հետ:

7.3 Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է կազմակերպել Ապահովագրված անձին իրավաբանական օգնության տրամադրումը, որն իր մեջ ներառում է ստորև նշված դեպքերը, և հատուցել դրա հետ կապված հետևյալ ծախսերը՝

7.3.1 Ապահովագրված անձին հեռահար, առցանց կամ տեղում՝ գրավոր կամ բանավոր կարգով տրամադրված իրավաբանական խորհրդատվության համար կատարված ծախսերը:

7.3.2 Վարչական և/կամ դատական վարույթի (քաղաքացիական կամ քրեական գործերով, եթե Ապահովագրված անձը ներգրավված է որպես կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, հայցվոր, պատասխանող կամ տուժող) շրջանակներում, ինչպես նաև նախնական քննության փուլում (քրեական գործերով) Ապահովագրված անձի իրավաբանական պաշտպանության, այդ թվում՝ փաստաբանի և/կամ թարգմանչի կողմից մատուցված ծառայությունների հետ կապված ծախսերը:

7.4 Իրավաբանական օգնությունը Ապահովագրված անձին պատշաճ ձևով ցուցաբերելու համար պատասխանատվություն է կրում նման օգնություն ցուցաբերած անձը:

7.5 Իրավաբանական օգնության հետ կապված ծախսերը յուրաքանչյուր ապահովագրված անձի համար հատուցվում է առավելագույնը 3000 (երեք հազար) եվրոյի սահմաններում:

7.6 Հատուցման ենթակա չեն այն ծախսերը, որոնց անհրաժեշտությունն առաջացել է ստորև նշված դեպքերի հետևանքով իրավաբանական օգնություն տրամադրելու համար՝

7.6.1 Ապահովագրված անձի կողմից դիտավորությամբ կատարված հակաօրինական գործողությունները (բացառությամբ անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեղ անհրաժեշտության և անմեղսունակության դեպքերի) կամ դիտավորությամբ թույլ տրված անգործությունը:

7.6.2 Ապահովագրված անձի կողմից երրորդ անձանց պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին հասցված վիրավորանքը, արատավորող տեղեկություններ և/կամ զրպարտություն տարածելը, որոնց հետ կապված ապահովագրված անձի դեմ պահանջ է ներկայացվել:

7.6.3 Ապահովագրված անձին ահաբեկչական գործողություններում մասնակցության մեղադրանք առաջադրելը կամ որպես կասկածյալ ներգրավելը:

7.6.4 Ապահովագրված անձի կողմից ավտոտրանսպորտային կամ ջրային տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում նրա դեմ և/կամ նրա կողմից պահանջ կամ հայց ներկայացվելը:

7.6.5 Ապահովագրված անձի սպառողական, հեղինակային կամ սույն բաժնի 7.2. կետում նշված պատահարի հետ չկապված այլ իրավունքների պաշտպանությունը:

7.6.6 Ապահովագրված անձի կողմից կամ Ապահովագրված անձի դեմ ոչ նյութական կամ բարոյական վնասի հատուցման պահանջ ներկայացնելը:

7.7 Ապահովագրական պատահարի հատկանիշներ ի հայտ գալու պայմաններում (համապատասխան իրավաբանական օգնություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում) Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում՝

7.7.1 Զանգահարել Աջակցող ընկերություն՝ Պայմանագրում նշված հեռախոսահամարներից որևէ մեկով:

7.7.2 Կատարել Աջակցող ընկերության աշխատակցի կողմից տրված բոլոր հրահանգները:

7.7.3 Հետևել իրավաբանական օգնություն ցուցաբերող անձանց խորհուրդներին, անհրաժեշտության դեպքում՝ նրանց տալ համապատասխան լիազորագիր:

Հավելված 3

ԾՐԱԳԻՐ III. ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ

1.1 Սույն ծրագրի դեպքում Պայմաններով նախատեսվում է Ստանդարտ ծրագիրը ամբողջ աշխարհի (բացառությամբ Պայմանների 5.13. կետում նշված պետությունների) համար՝ 30,000 (երեսուն հազար) եվրո ապահովագրական գումարի չափով:

1.2 Սույն ծրագրի ներքո Ապահովադրի կողմից ձեռքբերված Պայմանագիրը գործում է Պայմանագրի գործողության ժամկետում Ապահովագրված անձի՝ անսահմանափակ քանակությամբ ճանապարհորդությունների դեպքում:

1.3 Սույն ծրագրի շրջանակներում Պայմանագրի գործողության սկզբի և ավարտի միջև սահմանվում է ապահովագրության գործողության օրերի ընդհանուր առավելագույն քանակը՝ համաձայն ստորև նշված աղյուսակի.

Պայմանագրի գործողության ժամկետ	**Ապահովագրված օրերի քանակ**
12 ամիս	90 օր

12 ամիս	60 օր
12 ամիս	30 օր

Հավելված 4

ԾՐԱԳԻՐ IV. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾՐԱԳԻՐ

1.1 Սույն ծրագիրը կիրառվում է Ապահովադրի կողմից լրացուցիչ ապահովագրական վճարի վճարման և Պայմանագրում նշված լինելու դեպքում:

1.2 Սույն ծրագրի իմաստով ապահովագրական պատահար է համարվում Ապահովագրված անձի մոտ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրության տարածքում հանկարծակիորեն ի հայտ եկած COVID-19-ը, որը պահանջում է անհապաղ բժշկական օգնություն, ու դրա հետևանքով առաջացած մահը, և որոնց ի հայտ գալու դեպքում Ապահովագրողը պարտավորվում է իրականացնել ապահովագրական հատուցում: Ընդ որում, ապահովագրական պատահար չի համարվում այն դեպքը, երբ ապահովագրված անձի մոտ COVID-19-ի ախտորոշումը հաստատվել է վերջինիս մահից հետո:

1.3 Սույն ծրագրի շրջանակներում Ապահովագրողը հատուցում է հետևյալ ծախսերը.

1.3.1 անհետաձգելի (շտապ) բժշկական օգնության ծախսերը, որոնք ցուցված են բժշկի կողմից և ներառում են՝

1.3.1.1 հիվանդանոցային բուժման և էկոնոմ տիպի հիվանդասենյակի ծախսերը:

1.3.1.2 արտահիվանդանոցային ախտորոշման և բուժման ծախսերը, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժօգնությունը:

1.3.1.3 բժիշկ-մասնագետի հրավիրման հետ կապված ծախսերը, որոնք հատուցվում են այն դեպքում, երբ տվյալ տարածքում բուժումն անհնար է, և միևնույն ժամանակ անհնար է կամ բժշկի կողմից հակացուցվում է Ապահովագրված անձի տեղափոխումն այլ տարածք:

1.3.2 COVID-19 հիվանդության հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում վերջինիս աճյունի ռեպատրիացիան:

1.4 Սույն ծրագրով ապահովագրական հատուցումը ոչ ավել, քան Հավելված 4-ի 1.5 կետով սահմանված չափով վճարվում է՝

1.4.1 Ապահովագրված անձին, եթե նա, հետևելով սույն Պայմանների պահանջներին, ինքնուրույն է իրականացրել ծախսերը, կամ

1.4.2 Աջակցող ընկերությանը, եթե վերջինիս միջոցով են մատուցվել սույն Ծրագրում նշված ծառայությունները:

1.5 COVID-19 ախտորոշման, բուժման և ռեպատրիացիայի հետ կապված ծախսերը հատուցվում են առավելագույնը 2000 (երկու հազար) եվրոյի սահմաններում՝

անկախ նրանից, թե Ապահովագրական պատահարը որտեղ (որ Ապահովագրության տարածքում) է տեղի ունեցել:

1.6 Ապահովագրողը չի հատուցում՝

1.6.1 մինչև COVID-19 ախտորոշման հաստատումը իրականացված ախտորոշման և բուժման ծախսերը:

1.6.2 COVID-19-ի ախտորոշման և բուժման մասով ԱՀԿ չափորոշիչներով պարտադիր չհանդիսացող բժշկական ծառայությունների, դեղորայքի և պարագաների ծախսերը:

1.6.3 շաքարային դիաբետի, օնկոլոգիական հիվանդությունների, իմունային անբավարարության վիճակների, հեպատիտների, սիրտ-անոթային համակարգի, հիպերտոնիկ հիվանդության կամ այլ քրոնիկական հիվանդությունների և վիճակների, ինչպես նաև դրանց հետևանքների հետ զուգակցված COVID-19-ի ախտորոշման, բուժման և ռեպատրիացիայի ծախսերը:

1.6.4 կենսաակտիվ հավելումների, վիտամինոթերապիայի, կոսմետիկ և հիգիենայի պարագաների հետ կապված ծախսերը:

1.6.5 պլանային կարգով և դինամիկ հսկողության նպատակով իրականացվող հետազոտությունների հետ կապված ծախսերը:

1.6.6 հոգեբանական վիճակը բարելավելու կամ կանխարգելիչ նպատակով կատարված հետազոտման, դրանց բուժման կամ միջամտությունների հետ կապված ծախսերը:

1.6.7 Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի և/կամ թմրադեղերի և/կամ հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի և/կամ թունաքիմիկատների օգտագործման հետ զուգակցված COVID-19 ախտորոշման և բուժման ծախսերը:

1.6.8 մինչև Պայմանագիրը կնքելն Ապահովագրված անձի մոտ առկա հիվանդության, առողջական վիճակների և խանգարումների հետ զուգակցված COVID-19 ախտորոշման և բուժման ծախսերը:

1.6.9 COVID-19-ի ախտորոշման պայմաններում հանգստի կամ մեկուսացման պայմանների ապահովման համար իրականացված ծախսերը:

1.6.10 երբ Պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունեցել ռիսկի մեծացում (COVID-19 հիվանդություն և (կամ) բնորոշ ախտանիշներ ունեցող անձանց հետ շփում և այլն), և այդ մասին Ապահովադիրը չի տեղեկացրել Ապահովագրողին:

1.6.11 եթե Ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասի չափը գերազանցել է սույն բաժնի 1.5. կետով նախատեսված Ապահովագրական գումարի ենթասահմանաչափը (գերազանցող մասով):

1.7 Ապահովագրական հատուցում ստանալու նպատակով Ապահովագրված անձն (Ապահովադիրը) իր մշտական բնակության վայր վերադառնալուց հետո,

Պայմաններով սահմանված ժամկետների ընթացքում, պարտավոր է Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1.7.1 Հատուցում ստանալու համար համապատասխան դիմում:

1.7.2 Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի բացակայության մասին փաստաթուղթը:

1.7.3 Պայմանագիրը:

1.7.4 Ապահովագրական պատահարի վերաբերյալ իրավասու մարմինների կողմից տրված և հաստատված համապատասխան փաստաթղթերը:

1.7.5 Բժշկի (բժշկական հաստատության) կողմից նշանակված դեղորայքի ցանկն իր գներով, առողջական վիճակի մասին հաստատված տեղեկանքը, նշանակված ցուցումները, ինչպես նաև հաստատված փաստաթուղթ, որը կհավաստի Ապահովագրված անձի կողմից տվյալ Ապահովագրական պատահարի գծով բժշկին (բժշկական հաստատությանը) դիմելը, դիմելու ամսաթիվը, մատուցված ծառայությունները, բուժման տևողությունը, մինչև մեկնումը 72 ժամվա ընթացքում կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, ինչպես նաև ապահովագրվելուց հետո COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, որով հաստատվել է հիվանդության առկայությունը:

1.7.6 Ապահովագրողի պահանջով՝ այլ փաստաթղթեր:

1.8 Ապահովագրված անձի մահվան դեպքում, եթե աճյունի տեղափոխումը իրականացվել է ոչ Ապահովագրողի կամ Աջակցող ընկերության կողմից, ապա տեղափոխման ծախսերի դիմաց հատուցում ստանալու համար վերջինիս իրավահաջորդը Ապահովագրողին պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

1.8.1 Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական կարգով հաստատված պատճենը:

1.8.2 մինչև մահվան գրանցումը Ապահովագրված անձի համար Բժշկական հաստատությունում կատարված բժշկական ծառայությունների վերաբերյալ փաստաթղթերը, մահվան էպիկրիզը և այլ բժշկական փաստաթղթեր:

1.8.3 Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որտեղ կհաստատվի մահվան պատճառահետևանքային կապը Covid 19-ի հետ:

1.8.4 Մինչև մեկնումը 72 ժամվա ընթացքում կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, ինչպես նաև ապահովագրվելուց հետո մինչև մահը կատարված COVID-19 ՊՇՌ հետազոտության պատասխանը, որով հաստատվել է COVID-19-ի առկայությունը:

1.8.5 Համապատասխան իրավասու մարմնի (Նոտարի) կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագիրը կամ դրա պատճենը: